

Բ. Մ. ԲՈԳԻԱՆՈՎ, Ե. Լ. ԿՈՆՏՈՐ, Ա. ՅԵ. ԿՈՐՈՒԿՈՎ,

# ԹՎԱԲԱՆԱԿԱՆ

ԽԵՓԵՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԾՈՒ  
ԿԵՍԵՓԵՐԵԿԵՑԵՐԻ  
ԴՊՐԱՑՆԵՐԻ ՀՅՈՒԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՅԵՐԵՎԱՆԻ ԽԱՆ

1938

31 JAN 2018

Ի. Մ. ԲՈԴԴԱՆՈՎ, Շ. Լ. ԿԱՆՏՈՐ, Ա. ՅԵ. ԿՈՐՈՂԿՈՎ

# ԹՎԱԲԱՆԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բնագիրը հաստաված է ՌԽՖՍՀ ԼԺԿ-ի կողմից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937

1 կիլոմետրը (կմ) = 1000 մետրի (մ)  
 1 մ = 10 դեցիմետրի (դմ) = 100 սանտիմետրի (սմ) = 1000  
 միլիմետրի (մմ)  
 1 դմ = 10 սմ = 100 մմ  
 1 սմ = 10 մմ

ՄԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԸ

1 Տոննը (տ) = 10 ցենտների (ց) = 1000 կիլոգրամի (կգ)  
 1 ց = 100 կգ  
 1 կգ = 1000 գրամի (գ)

ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՑԵՎ ԸՆԴԻՉԵՆԵՐԻ ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԸ

1 ՀԵՂՈՒԼԻՄՊՐԸ (հլ) = 10 դեկալիմպրի (դլլ) = 100 լիտրի (լ)

ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԸ

1 քառ. կիլոմետրը (կմ<sup>2</sup>) = 100 հեկտարի (հա) = 10 000 արե (ա) = 1 000 000 քառ. մ (մ<sup>2</sup>)  
 1 հա = 100 ա = 10 000 մ<sup>2</sup>  
 1 ա = 100 մ<sup>2</sup>  
 1 մ<sup>2</sup> = 100 դմ<sup>2</sup> = 10 000 սմ<sup>2</sup> = 1 000 000 մմ<sup>2</sup>  
 1 դմ<sup>2</sup> = 100 սմ<sup>2</sup> = 10 000 մմ<sup>2</sup>  
 1 սմ<sup>2</sup> = 100 մմ<sup>2</sup>

ՄԱԿԱԼԻ ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԸ

1 խոր. մ (մ<sup>3</sup>) = 1000 խոր. դմ (դմ<sup>3</sup>)  
 1 դմ<sup>3</sup> = 1000 խոր. սմ (սմ<sup>3</sup>)  
 1 սմ<sup>3</sup> = 1000 լիտր (լիթ)



11-2844097

ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՆԳԱՆԻԾ ՑԵՎ ՎԵՑԱՆԻԾ ԹՎԵՐ

Թվերը գրում են հետեւալ տասը նշաններով՝ 1, 2,  
 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0: Այդ նշանները կոչվում են  
 թվանշաններ:

Մեկից մինչև իննը բոլոր թվերը գրվում են մեկ  
 թվանշանով, մեկ նշանով: Ալգորիթմ թվերը կոչվում են  
 միանից թվեր:

10 թիվը գրվում է յերկու թվանշանով: Յերկու թվանշանով գրվող թվերը կոչվում են յերկանից թվեր:

10-ի մեջ աջ կողմից առաջին տեղում գրված 0 թվանշանը ցույց է տալիս, վոր 10-ի մեջ առանձին միավորներ չկան:

1. Ի՞նչ է ցույց տալիս զերոն 30-ի մեջ, 40-ի մեջ:
2. Ի՞նչ է ցույց տալիս այն թվանշանը, վորը թվի  
 մեջ աջ կողմից առաջին տեղն է գրավում: Ի՞նչ է ցույց  
 տալիս այն թվանշանը, վորը թվի մեջ աջ կողմից յերկուրդ տեղն է գրավում:

100 թիվը գրվում է յերեք թվանշանով: Յերեք թվանշանով գրվող թվերը կոչվում են յեռանից թվեր:

100-ի մեջ աջ կողմից գրված առաջին զերոն ցույց է

տալիս, վոր 100.-ի մեջ առանձին միավորներ չկան. աջ կողմից յերկրորդ գերոն ցուց է տալիս, վոր 100.-ի մեջ առանձին տասնավորներ չկան:

3. Ի՞նչ է ցուց տալիս 100.-ի մեջ աջ կողմից յերկրորդ տեղը գրավող 1 թվանշանը:

4. 584.-ի մեջ քանի առանձին միավոր, քանի առանձին տասնավոր և քանի առանձին հարլուրավոր կատ:

5. Ի՞նչ փոփոխության կենթարկվի 4 թվանշանի արժեքը, յեթե նրան աջ կողմից կցագրենք զերո, 2 թվանշանը, յերկու զերո:

6. Ի՞նչպես կփոփոխվեն 2 և 7 թվանշանների արժեքները 27.-ի մեջ, յեթե նրանց տեղերը փոխենք:

Մինույն թվանշանը տարբեր արժեք ունի, նաև թե թվի մեջ նա վճր տեղն է գրավում: Որինակի համար, 444.-ի մեջ աջ կողմից առաջին թվանշանը նշանակում է 4 միավոր, յերկրորդը՝ 4 տասնավոր, իսկ յերրորդը՝ 4 հարլուրավոր: Միավորները, տասնավորները, հարլուրավորները կոչվում են թվի կարգեր:

7. Հստ հերթականության ասացեք յեռանիշ թվի կարգերը:

8. Հստ հերթականության ասացեք յերկանիշ թվի կարգերը:

9. Թվի մեջ վճր տեղն են գրավում տասնավորները, միավորները, հարլուրավորները:

10. 574, 650 և 180 թվերից լուրաքանչյուրի մեջ քանի հարլուրավոր, դրանից զատ, քանի տասնավոր և դրանից զատ քանի միավոր կտ:

11. 790.-ի մեջ ի՞նչ է ցուց տալիս միավորների տեղը գրաված զերոն:

12. 609, 704, 902 թվերից լուրաքանչյուրի մեջ ժանիք հարլուրավոր, դրանից զատ, քանի տասնավոր և դրանից ել զատ քանի միավոր կա:

13. 507.-ի մեջ տասնավորների տեղը դրված զերոն ի՞նչ է ցուց տալիս:

14. Թվանշաններով գրեցեք այն թիվը, վորը բաղկացած է յերեք հարլուրավորից և ութը տասնավորից, վեց հարլուրավորից և իննը միավորից, ութը հարլուրավորից և հինգ միավորից, իննը հարլուրավորից: Այս թվերի մեջ վճր կարգերի տեղ են դրված զերոները:

15. Վճր թվանշանը պետք է գրել այն թվի միավորների տեղը, վորը բաղկացած է 5 տասնավորից, 3 հարլուրավորից և 4 տասնավորից:

16. 2 հարլուրավորից և 4 միավորից բաղկացած թվի մեջ տասնավորների տեղը ի՞նչ թվանշան պետք է դնել.


Յերեք թվի մեջ փորեվե կարգի առանձին միավորներ չկան, ապա նշանց տեղը դնում են զերո: Որինակի համար, 404.-ի մեջ զերոն նշանակում է, վար այդ թվի մեջ առանձին տասնավորներ չկան:

17. Հաշվիչի վրա գցեցեք 9 հարլուրավոր և դրան ավելացրեք 1 հարլուրավոր: Ստացվեց 10 հարլուրավոր կամ 1 հազարավոր:


1000.-ը գրվում է չորս թվանշաններով: Այն թվերը, վորոնք գրվում են չորս թվանշաններով, կոչվում են բառանիչ թվեր:

18. Ի՞նչ է ցուց տալիս այն զերոն, վորը 1000.-ի մեջ դրված է միավորների տեղը, տասնավորների տեղը, հարլուրավորների տեղը:

19. Ի՞նչ է ցուց տալիս 1 թվանշանը, վորը 1000.-ի մեջ աջ կողմից չորսորդ տեղն է գրավում:



## 10 ՀԱՐՅՈՒԹԿՈՒՄ



1 ՀԱՅԱՍՏԱՆԻ

20. Թվի մեջ, այլից ձախ հաշված, վեր տեղն են  
գրավում հազարավորների միավորները։

Հազարամբութերի միավորները կազմում ե քի  
շորորդ կազմը:

21. Հաջորդականութեամբ ասացեք քառանիշ թվի բոլոր կարգերը, սկսելով ամենացածը կարգից։ Այդ կարգերն ասացեք սկսելով ամենաքարձը կարգից։


22. Հետեւյալ թվերից լուրաքանչյուրի մեջ քանի հազարավոր, քանի առանձին հարլուրավոր, առանձին տասնավոր և առանձին միավոր կա. 6703, 8000, 5570, 4900, 7850, 7800։ Այդ թվերի մեջ վոր կարգերի տեղն են զերոներ գրված։

23. Հետեւալ թվերից յուրաքանչյուրի մեջ քանի՞ հազարավոր, քանի առանձին հարյուրավոր, առանձին տասնամբոր, և առանձին միավոր կա. 3089, 3607, 8070, 9003, նաև 3080, 8004. Վեր կարգերի տեղն են դրված զերոները և բարձր տալիս յուրաքանչյուր զերոն:


24. 9 հաղարավորից և 6 միավորից բաղկացած թվի  
մեջ հարլուրավորների, և տասնավորների տեղը ի՞նչ  
թվանշաններ պետք է դնել։ Գրեցեք այդ թիվը։

25. 2 հարյուրավորից և 7 միավորից բաղկացած թվի  
մեջ վ՞որ կարգերի տեղ պետք է զերո դնել։ 3 հազարավո-  
րից և 9 տասնավորից բաղկացած թվի մեջ վ՞որ կարգերի  
տեղ պետք է զերո դնել։ Դրեցեք այդ թվերը։

26. Հաշվիչի վրա գցեցեք 9 հազար և ավելացրեք 1  
հազար։ Ստացվեց 10 հազար, կամ 1 տասնազարավոր։



10 ՀԱԶԱՐՎԵՐ



— 155252949490

10 000-ը գրվում ե հինգ թվանշանով։ Հինգ թվանը-  
շանով գրվող թվերը կոչվում են ննջանիք թվեր։

27. 10 000-ի մեջ բնակչությունը տալիս այն գերոն, վորը դրվում է աջ կողմից առաջին տեղում, լերկը բորդ տեղում, լերբորդ տեղում, չորրորդ տեղում:

28. Թվի մեջ աջից ձախ հաշված, վոր տեղն էն  
գըավում տասհազարավորները:

29. Տասնակարավորները թվի վճռ կարգն են կազմում։

30. Կարգացեք հետևյալ թվերը. 64 075, 89 302,  
53 790, 48 300, 79 490, 37 200, 43 009, 90 060, 70 003,  
65 080, 75 405, 39 090։ Այս թվերի մեջ վ՞ո՞ր կարգերի  
տեղն է զերո դրված։

31. Գրեցեք թվանշաններով՝ լոթանասունլերեք հազար լերկու հարյուր լըրեսունն ութ, վաթսուն հազար

լոթ հարյուր վաթսուն, իննսուն հազար հարյուր ութ,  
հիսուն հազար լեռեք, քառասուն հազար հիսուն, հիսուն-  
լոթ հազար իննը, իննսունիերեք հազար վեցհարյուր:

32. Դրեցեք այն թիվը, վորը բաղկացած ե՞ւ 7 տաս-  
հազարավորից 5 հարյուրավորից և 8 միավորից, 1 տաս-  
հազարավորից հինգ հազարավորից 4 տասնավորից և 9  
միավորից, 5 տասնազարավորից և 7 տասնավորից, 8  
տասնազարավորից և 2 միավորից: Այս թվերի մեջ վոր  
կարգերի տեղն են գերօներ դրված:

33. Հաշվիչի վրա գցեք 9 տասնազարավոր և դրան  
ավելացրեք 1 տասնազարավոր: Ստացվեց 10 տասնազա-  
րավոր, կամ 1 հարյուրհազարավոր:

The first table (left) shows the breakdown of 100,000 into 10 groups of 10,000 each. The second table (right) shows the breakdown of 10,000 into 10 groups of 1,000 each.

100 000	
10 000	10 000
1 000	1 000
100	100
10	10
1	1

10 ՏԱՍՆԱԶԱՐԱՎՈՐ

10 000	
1 000	1 000
100	100
10	10
1	1

ԴԱՅԱՎՈՐ ՀԱՅԱԿԱՐԱՎՈՐ

և 3.

100 000-ը դրվամ ե վեց թվանշաններով: Վեց թվա-  
նշաններով գրվող թիվը կոչվում ե վեցանիս թիմ:

34. Թվի մեջ, հաշվելով աջից ձախ, վոր տեղն են  
գրավում հարյուր հազարավորները:

35. Հարյուր հազարավորները թվերի վոր կարգն են  
կազմում:

36. Հաշվիչի վրա գցեք 6 հարյուր հազարավոր,  
դրան ավելացրեք 3 տասնազարավոր, այնուհետև ավե-

լացրեք 7 հազարավոր, 4 հարյուրավոր, 2 տասնավոր,  
և 9 միավոր, կարգացեք ստացված թիվը:

37. Հաշվիչի վրա գցեք 9 հարյուր հազարավոր, դրան  
ավելացրեք 4 տասնազարավոր, այնուհետև ավելացրեք 8  
տասնավոր, կարգացեք ստացված թիվը:

38. Կարգացեք հետևյալ թվերը:

963 827,	987 480,	436 800,	540 000,
302 407,	345 009,	600 008,	300 409,
300 900,	706 004,	117 018,	909 019.

39. Դրեցեք այն թիվը, վորը բաղկացած ե՞ւ 3 հա-  
րյուրհազարավորից 9 հազարավորից 7 հարյուրավորից և  
2 միավորից, 8 հարյուրհազարավորից 5 հարյուրավորից  
և 9 միավորից, 5 հարյուրհազարավորից 3 հազարավորից  
և 8 միավորից, 9 հարյուրհազարավորից և 3 տասնա-  
վորից:

40. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը. Եթեք  
հարյուր հիսունութ հազար չորսհարյուր քսանիննը, վեց  
հարյուր յեռեսուն հազար ութ հարյուր վաթսուն, հինգ  
հարյուր հազար վեց հարյուր, յերեք հարյուր հազար ութ,  
չորս հարյուր վեց հազար իննը, հինգ հարյուր իննը հա-  
զար տասներեք:

Յուրաքանչյուր յերեք կարգը, աջից ձախ հաշված,  
կազմում են մի դաս: Առաջին, յերկրորդ և յերրորդ կար-  
գերը կազմում են միավորների դասը. չորրորդ, հինգե-  
րորդ և վեցերորդ կարգերը կազմում են հազարավորների  
դասը:

Թիվը թվանշաններով գրելիս, յեթե նրա մեջ չոր-  
սից ավելի կարգ կա, ապա մի դասը մրուսից անջատում  
են փոքրիկ միջանցքով (արանքով)՝ 570 840,

41. Կարդացեք կարգալին ցանցում զբված թվերը.

Հաղարավորների դաս			Միավորների դաս		
կարգեր					
6	5	4	3	2	1
Հարյուրավորներ	Տասնաշուրներ	Միավորներ	Հարյուրավորներ	Տասնաշուրներ	Միավորներ
7	3	2	5	4	
8	0	5	0	3	
5	7	8	2	9	
0	6	0	9	0	
4	5	6	7	8	
9	0	0	0	2	
4	9	0	0	0	
6	2	0	8	0	
0	0	3	0	7	

42. Աջից ձախ հաշված վմբ տեղում են գտնվում հարյուրավորները, տասնազարավորները, հազարավորները, հարյուրհազարավորները:

43. Դրեցեք ու կարդացեք այն թիվը, վորը բաղկացած ե 2 տասնազարավորից 8 հազարավորից 4 հարյուրավորից 7 տասնավորից և 4 միավորից. 4 հարյուր հազարավորից 6 հազարավորից և 8 միավորից. 9 հարյուր հազարավորից 3 հարյուրավորից և 5 միավորից:

44. Հետեւալ թվերից լուրաքանչուրի մեջ ամեն մի կարգից քանի միավոր կա. 370 890, 30 040, 409 008, 50 006, 800 007:

45. Տասնավորը քանի միավոր ե պարունակում: Հարյուրավորը քանի տասնավոր ե պարունակում: Հազարավորը քանի հարյուրավոր ե պարունակում:

Տասը միավորը կազմում ե մեկ տասնավոր, տասը տասնավորը կազմում ե մեկ հարյուրավոր, տասը հարյու-

րավորը՝ կազմում ե մեկ հաղարավոր և այլն, ալսինքն լուրաքանչուր բարձր կարգալին միավորը բաղկացած է ստորին հարեւան կարգի տասը միավորներից: Հաշվի ալս պիսի սիստեմը կոչվում ե տասնավորական սիստեմ:

## ՄԵԾ ԹՎԵՐ

Յեթե 900 հազարին ավելացնենք 100 հազար, ապա կստանանք 1000 հազար, կամ 1 միլիոն: 1 միլիոնը թվերով գրվում ե ալսպես՝ 1 000 000:

46. Ինչքան կստացվի, յեթե 700 000-ին ավելացնենք 300 000: Ինչքան կստացվի, յեթե 400 000-ին ավելացնենք 600 000:

47. Մեկ միլիոնը քանի հազար ե պարունակում:

48. Կարդացեք հետեւալ թվերը. 9 000 000, 3 000 000, 7 000 000, 6 000 000:

49. Թվանշաններով գրեցեք հետեւալ թվերը. 5 միլիոն, 7 միլիոն, 4 միլիոն:

50. Դին քանի զերո պետք ե կցադրել վոր գրվի՞ միլիոն:

51. Կարդացեք հետեւալ թվերը. 30 000 000, 20 000 000, 10 000 000, 80 000 000, 87 000 000, 200 000 000, 304 000 000:

52. Թվանշաններով գրեցեք հետեւալ թվերը. 25 միլիոն, 70 միլիոն, 34 միլիոն, 400 միլիոն, 608 միլիոն, 200 միլիոն, 250 միլիոն, 902 միլիոն:

53. Թվի մեջ, աջից ձախ հաշված, վմբ տեղում են գտնվում միլիոնավորները, տաս միլիոնավորները, հարյուր միլիոնավորները:

Յոթերորդ, ութերորդ և իններորդ կարգերը կազմում են միլիոնավորների դասը:

54. Սաացեք միավորների դասի կարգերը, հազարավորների դասի կարգերը, միլիոնավորների դասի կարգերը:

**55. Կարդացեք հետևյալ թվերը։**

8 050 060	80 740 080	90 506 070	8 000 004
7 009 065	103 004 560	508 039 200	90 007 006
18 000 076	40 000 567	40 000 070	14 000 085
3 020 004	70 050 008	600 001 000	21 301 333

**56. Կարդացեք հետևյալ աղբուսակի թվերը։  
Արմիության անդամների թիվը ԽՍՀՄ-ում։**

Թվական-ներ	Քանակություն	Թվական-ներ	Քանակություն
1922	4 546 100	1928	10 994 600
1925	7 846 800	1934	19 046 300

**57. Կարդացեք հետևյալ աղբուսակի թվերը։  
ԽՍՀՄ-ի ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ**

Բնակչության դասակարգերը	Ազգաբնակչության թիվը հազարներով		
	1913 թ.	1928 թ.	1934 թ. (առ 1 հունվարի)
I. Պրոլետարիատ (բանվորներ և ծառայողներ) Այդ թվում	23 300 000	26 343 000	47 118 000
II. Ինպուստրիալ պլոտիտարիատ և ծառայողներ Բ. Գյուղատնտեսական պլոտիտարիատ	17 300 000	24 124 000	41 751 000
	6 000 000	2 219 000	5 367 000
III. Վենտեսես զյուղացիներ (առանց կուլակների) և չկոտերացված աշխատավորներ տնախակործներ և արհեստավորներ	չկար	4 406 000	77 037 000
	90 700 000	111 131 000	37 902 000
IV. Բնութագիա (կարգածատերեր, քաղաքային խոշոր և մասնի բուրժուազիա, առելուականներ և կուլակներ) Այդ թվում	22 100 000	6 801 000	174 000
V. Յոլի (աշակերտներ, բանակառակառներ և այլն)	17 100 000	5 618 000	149 000
	3 200 000	3 671 000	5 769 000
Հնդասեր	139 300 000	152 352 000	168 000 000

**Թվերը գրելիս պետք է հիշել հետեւյալը։**

Թվի գրությունն սկսում են ամենաբարձր դասից։ Յուրաքանչյուր դասը պետք է ունենայ յերեք թվանիւն (բացի ամենաբարձր դասից; վորը կարող է ունենալ յերեխից ինչ թվանիւն): Յերեք թիվը կարդալիս վորեվե ստորին կազմի անունը չի տրվել, ապա նրա տեղը գերո են դնում, իսկ յերեք վորեվե ստորին դասի անունը չի տրվել, ապա նրա տեղը դնում են յերեք գերո։

**58. Թվանշաններով գրեցեք հետեւյալ թվերը. լեռեսուն լոթ միլիոն հարյուր տասնութ հազար իննը հարյուր ութսուն չորս. լերկու հարյուր քառասուն յերեք միլիոն հինգ հարյուր իննըսուն լերկու հազար վեց հարյուր հինգսուն մեկ։**

**59. Թվանշաններով գրեցեք հետեւյալ աղբուսակի թվերը։**

**Յեկոսպական գլխավոր պետությունների ազգաբնակչությունը 1931 թ.**

Յիշերի անունը	Ազգաբնակչության քանակը
ԽՍՀՄ . . . . .	Հարյուր վաթուն մեկ միլիոն քառասուն հազար գալթուն չորս միլիոն հարյուր հազար
Գերմանիա . . . . .	Բ. սասուն հինգ միլիոն իննը հարյուր հազար
Անգլիա . . . . .	Քառասուն մեկ միլիոն ութ հարյուր հազար
Ֆրանսիա . . . . .	Քառասուն մեկ միլիոն հարյուր հազար
Իտալիա . . . . .	Քառասուն մեկ միլիոն հարյուր հազար

**60. Ի՞նչ կատացվի, լեթե 900 միլիոնին ավելացնենք 100 միլիոն։**

**900 միլիոն + 100 միլիոն = 1000 միլիոն, կամ 1 միլիարդ։**

1 միլիարդը թվանշաններով գրվում ե այսպես՝  
1 000 000 000:

61. Քանի՞ միլիոն կա մեկ միլիարդի մեջ:

62. Ի՞նչ կսացվի, յեթե 600 միլիոնին ավելացնենք  
400 միլիոն:

63. Ի՞նչ կսացվի, յեթե 300 միլիոնին գումարենք  
200 միլիոն:

64. Կարդացեք հետևյալ թվերը՝ 2 000 000 000,  
6 000 000 000, 3 000 000 000, 7 000 000 000, 4 000 000 000,  
8 000 000 000:

65. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը. 5 մի-  
լիոն, 8 միլիոն, 9 միլիոն:

66. 7-ի կողքին քանի՞ զերո պետք է գրել, վոր ըս-  
տացվի 7 միլիարդ:

67. Կարդացեք հետևյալ թվերը:

40 000 000 000      16 000 000 000      250 000 000 000

70 000 000 000      600 000 000 000      501 000 000 000

34 000 000 000      725 000 000 000      804 000 000 000

68. Թվի մեջ, աջից ձախ հաշված, վեր տեղում են  
դրույթում միլիարդավորները, տաս միլիարդավորները:

Տասներորդ, տասնըմեկերորդ և տասներկուերորդ կար-  
դերը կազմվում են միլիարդավորների դասը:

69. Մեկ միլիարդը քանի՞ հազար ե պարունակում:

70. Մեկ միլիարդը քանի՞ հարյուր ե պարունակում:

71. Մեկ միլիոնը քանի՞ հարյուր ե պարունակում:

72. Կարդացեք կարգավիճ ցանցում գրված թվերը.

Միլիարդավորնե- րի դաս (մեդ.)		Միլիոնավորնե- րի դաս (մեն.)		Հազարավորների		Միավորների					
Կարգեր											
12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
Հարյուր.	Տասնակ.	Միակ.	Հարյուր.	Տասնակ.	Միակ.	Հարյուր.	Տասնակ.	Միակ.	Հարյուր.	Տասնակ.	Միակ.
4	6	7	5	4	3	2	1	0	9	8	0
0	0	0	0	3	0	0	0	0	0	0	0
5	0	0	0	4	0	0	0	0	0	0	0

73. Հերթականությամբ ասացեք բոլոր դասերը, մի-  
ավորների դասից մինչև միլիարդավորների դասը:

74. Հակառակ կարգով ասացեք բոլոր դասերը, սկզ-  
բելով միլիարդավորների դասից միավորների դասը:

75. Ամեն մի գասիր մեջ քանի՞ կարգ կա: Ասացեք  
այդ կարգերը:

76. Թվի մեջ, աջից ձախ հաշված, վեր տեղում են  
դրույթում միլիոնավորները, տասնազարավորները, հարյուր  
միլիարդավորները, հարյուր հազարավորները, տասնմիլիո-  
նավորները, միլիարդավորները, հազարավորները, հարյուր  
միլիոնավորները, տասնավորները, տասնմիլիարդավորնե-  
րը, միավորները:

77. Քանի՞ թվանշանով ե գրված թիվը, յեթե նրա  
բարձր կարգը հարյուր հազարավորներն են, տաս միլիո-  
նավորներն են, միավորներն են, տաս միլիարդավորներն  
են, հարյուր միլիոնավորներն են, հարյուրավորներն են,

հազարավորներն են, տասնավորներն են, միլիարդավորներն են, միլիոնավորներն են, տասն հազարավորներն են, հարյուր միլիարդավորներն են:

78. Ինչպես ե կոչվում թվի ամենաբարձր կարգը և վոր դասին ե նա պատկանում, յեթե թիվը գրված է յոթ թվանշաններով, լեռեք թվանշաններով, իննը թվանշաններով, հինգ թվանշաններով, մի թվանշանով, տասը թվանշաններով, վեց թվանշաններով, տասնըմեկ թվանշաններով:

79. Կարդացեք թվերը. 25 678, 564 725, 965 492, 5 756 453, 38 118 295, 145 261 852, 3 752 455 821, 25 483 964 328, 297 161 328 184.

80. Կարդացեք թվերը. 70 000, 908 405, 7 400 809, 10 850 309, 350 906 408, 8 504 208 600, 90 500 901 200, 700 400 600 800.

81. Կարդացեք թվերը. 90 070, 800 040, 4 050 080, 70 060 007, 800 002 080, 9 060 004 070, 50 008 060 007, 400 060 004 050.

82. Կարդացեք թվերը. 5 000 600, 80 000 070, 600 000 007, 9 000 600 008, 50 300 000 040, 400 000 007 000, 700 000 080 000.

83. Թվանշաններով գրեցեք հետեւյալ թվերը. հինգ միլիարդ հարյուր հիսուն ութ միլիոն վեց հարյուր քառասուն իննը հազար լեռկու հարյուր ութսուն յոթ. հարյուր տասնհինգ միլիարդ վեց հարյուր լեռեսուն չորս միլիոն լեռկու հարյուր քառասուն յոթ հազար իննսուննեկ. լեռեք միլիարդ քառասուն միլիոն հինգ հազար իննսուն միլիարդ լեռեք միլիոն վաթսուն հազար լեռկու. յոթ հարյուր միլիարդ քսան միլիոն լեռեք հազար յոթանառուն:

84. Կարդացեք հետեւյալ աղյուսակի թվերը:  
ԽՍՀՄ-ի 1935 թ. տնտեսության թվային անհաջողությունների աղյուսակը:

Ցեղամուտների նախահաշիվ	Ծախսերի նախահաշիվ		
Ցեղամուտների անունները	Բուրլի	Ծախսերի անունները	Բուրլի
Հանքայնացված տնտեսություններ Ազգաբնակչության միջոցների մոբիլ- իացիայից . . . Այլ ցեղամուտներ	57 090 251 000 5 732 570 000 3 077 550 000 Հնդամենը	Ժողովրդական տնտեսության վրա . . . Սոցկուլտ կարե- ների վրա . . . Պաշտպանության և կառավարման վրա . . . Պետ փոխառու- թյունների վրա: Հատկացումներ տեղական բյուջե- յին . . . Այլ ժողովրդ. . . Պետ ուղերդ. . .	25 156 891 000 4 804 312 000 8 152 500 000 1 815 000 000 8 977 256 000 6 494 592 000 500 000 000 Հնդամենը
	65 900 551 000		65 900 551 000

85. Գրեցեք ու կարդացեք այն թիվը, վորը բաղկացած ե 2 տասն հազարավորից 8 հազարավորից 4 հարյուրավորից 7 տասնավորից և 1 միավորից; 3 միլիոնավորից 7 հազարավորից և 2 տասնավորից; 56 միլիոնից և 20 հազարավորից. 4 միլիոնից 7 հազարից և 48 միավորից:

86. Թվանշաններով գրեցեք հետեւյալ թվերը. լեռկու միլիոն լեռեք հարյուր; վաթսուն միլիոն յոթանառուն; հինգ հարյուր միլիոն յոթ; ութ միլիարդ հարյուր հազար իննը, քառասուն միլիարդ վեց հարյուր միլիոն յոթանառուն:

սուն; չորս հարլուր միլիարդ լոթ հազար; ութսուն միլի-  
արդ լեռեսուն հազար:

## ՄԵՇ ԹՎԵՐԻ ԿԼՈՐԱՑՈՒՄԸ

Մեծ թվերը դժվար ե հիշել և դժվար ե իրար հետ  
բաղկատել: Այդ պատճառով մեծ թվերը կլորացնում են:  
Որինակալ ցուց տանք, թե ինչպես են մեծ թվերը կլո-  
րացնում:

«1934 թ. գարնանացանի պլանը հետևյալն եր. կոլ-  
տընտեսություններ և խորհունակություններ — 80 204 000  
նա, մենատնաեսներ — 12 794 000 նա, ընդամենը —  
92 998 000 նա»: Այս թվերը կլորացնենք մինչև միլիո-  
նավորները 80 204 000-ը մինչև միլիոնավորները կլո-  
րացնելու համար պետք ե զեն գցել հազարավորների ու  
միավորների դասը և նըանց տեղը գնել մնացած դասի  
անունը, այսինքն «միլիոն»: Կատանանք 80 մլն.: Այս  
թիվը կլորացնելիս մենք զեն գցեցինք 204 000, ալիսինքն  
կես միլիոնից ինչ 12 794 000-ը կլորացնելու համար  
պետք ե զեն գցել 794 000, ալիսինքն կես միլիոնից ա-  
վելի, ուստի միլիոնների թիվը մեծացնում ենք 1 միլիո-  
նով և ստանում ենք 13 մլն.: 80 միլիոնը կլորացված  
ե պակասորդով, իսկ 13 միլիոնը կլորացված ե հավելու-  
դով: Պակասորդով պետք ե կլորացնել այն գեպքում, իերը  
դեն գցվող թվանշաններից առաջինը (ձախ կողմից) 5-ից  
փոքր ե, իսկ լեթե այդ թվանշանը 5 ե կամ 5-ից մեծ ե,  
ապա պետք ե կլորացնել հավելուդով: 92 998 000-ը կը-  
րուցնենք մինչև միլիոնավորները: Պետք ե կլորացնել  
հավելուդով, վորովիետեն զեն գցվող թվի մեջ (998 000-ի  
մեջ) ձախ կողմից առաջին թվանշանը 9 ե, ալիսինքն մեծ  
ե 5-ից: Կատանանք 93 մլն.:

87. 76 548-ը քանի լրիվ հարլուրյակ ե պարունակումէ  
նրա մեջ քանի լրիվ տասնազարյակ, լրիվ հազարյակ լրիվ  
տասնյակ կա:

88. 287 495-ի մեջ քանի լրիվ հարլուրյակ, հարլուր-  
նազարյակ, տասնյակ, տասնազարյակ կա:

89. 890 004-ի մեջ քանի լրիվ տասնյակ կա: Ալդ  
թվի մեջ քանի լրիվ հազարյակ, հարլուրհազարյակ, հա-  
րլուրյակ, տասնազարյակ կա:

90. 4 090 070-ի մեջ քանի լրիվ տասնազարյակ կա:  
Ալդ թվի մեջ քանի լրիվ միլիոն, տասնյակ, հազարյակ,  
հարլուրյակ հարլուրհազարյակ կա:

91. Ցուց տվեք, թե կլորացնելիս հետեւալ թվերից,  
վնրը պետք ե կլորացնել պակասորդով և վնրը հավելու-  
դով: 7428, 54 706, 92 592, 70 369, 85 629, 99 499:

92. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև հազարավոր-  
ները. 28 367, 545 289, 1 618 458, 560 379 189, 26 784,  
987 584, 9557 865, 475 689 587:

93. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև միլիոնավոր-  
ները. 35 287 428, 685 875 000, 2 899 754 860,  
35 789 397 865:

94. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև միլիարդա-  
վորները. 28 389 460 500, 119 679 952 800,  
689 379 896 475:

95. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև միլիոնավոր-  
ները. 75 365 հազ., 48 965 հազ., 35 379 857 հազ.:

96. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև միլիարդավոր-  
ները. 3754 մլն., 65 288 450 հազ., 409 758 մլն.,  
119 785 420 հազ.:

97. Հետեւալ թվերը կլորացրեք մինչև հարլուր հա-  
զարավորները. 386 950, 2 427 765, 56 387 260,  
1 267 985 460:

98. Հետևյալ թվերը կլորացրեք մինչև տասմիլիունավորները. 28 375 400, 147 600 500, 5 869 428 000, 28 351 475 800;

99. Հետևյալ թվերը կլորացրեք մինչև տասմիլիարդավորները. 56 785 մլն., 262 385 460 հազ., 58 426 մլն., 199 265 385 հազ., 18 385 269 752;

100. Ածխի հանույթը ԽՍՀՄ-ում.

Թվականներ	Հանույթը տաններով
1928 . . . . .	35 808 000
1929 . . . . .	41 664 000
1930 . . . . .	46 052 000
1931 . . . . .	53 544 000
1932 . . . . .	64 406 000
1933 . . . . .	75 959 000
1934 . . . . .	93 480 000

Աղբուսակի թվերը կլորացրեք մինչև միլիոնավորները:

101. ԽՍՀՄ-ի տերիտորիան և ազգաբնակչությունը

Միութենական հանրապետություններ	Մակերեսը քառակուսի կիումետրով	Բնակչությունը թվուականի 1-ուն հունվարի 1933 թ.
ՌԽՖՍՀ . . . . .	16 499 000	105 179 000
ՈՒԽՍՀ . . . . .	443 000	31 902 000
ԲԽՍՀ . . . . .	127 000	5 439 000
Ազրբ. ԽՍՀ . . . . .	86 000	2 891 000
Վրաց. ԽՍՀ . . . . .	70 000	3 111 000
Հայ. ԽՍՀ . . . . .	30 000	1 109 0 0
Թուրքմ. ԽՍՀ . . . . .	444 000	1 269 000
Ուզբ. ԽՍՀ . . . . .	370 000	5 418 000
Տաճ. ԽՍՀ . . . . .	144 000	1 333 000
Ղազախ. ԽՍՀ . . . . .	2 744 000	6 797 000
Կիրգիզ. ԽՍՀ . . . . .	197 000	1 302 000
<b>ԽՍՀՄ</b> . . . . .	<b>21 154 000</b>	<b>165 749 000</b>

Աղբուսակի թվերը կլորացրեք. ա) մինչև հարյուր հազարավորները, բ) մինչև տասնհազարավորները:

## ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԲԱՆԱԿՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ

102. Կոլտնտեսությունն ունի 34 կով և 45 ձի: Ընդամենը քանի գլուխ անասուն ունի կոլտնտեսությունը: Այս թվերը, վոր գումարում են, կոչվում են գումարելիներ: Գումարումից ստացված թիվը կոչվում է զումար:

103. Ինչի լե հավասար գումարմ, լեթե գումարելիներից մեկը հավասար է 35-ի, իսկ մյուսը՝ 56-ի:

104. Մի կտորում կա 24 և գործվածք, իսկ մյուսում՝ 18 և ավելի: Քանի մետք է յերկրորդ կտորը:

105. Ի՞նչ գործողություն պետք է կատարել, վոր 75-ը մեծանա 84-ով:

106. Ինչի լե հավասար գումարը, լեթե գումարելիներից մեկը հավասար է 12-ի, իսկ մյուս գումարելին 32-ով մեծ է առաջինից:

107. Ի՞նչի լե հավասար գումարը, լեթե գումարելիներից մեկը 43 է, իսկ մյուսը 11-ով մեծ է առաջինից:

108. Ի՞նչի լե հավասար գումարը, լեթե մի գումարելին հավասար է 12-ի, իսկ մյուսը 30-ով մեծ է առաջինից:

109. Գումարենք 24 և 32 թվերը:  
24-ին նախ ավելացնում ենք 3 տասնեւիկ, իսկ հետո 2 միավոր:

$$24 + 32 = 24 + 30 + 2 = 54 + 2 = 56$$

110. Գումարենք 245 և 134 թվերը:

$$245 + 134 = 245 + 100 + 30 + 4 = 345 + 30 + 4 = \\ = 375 + 4 = 379$$

111. Լուծեցեք բանավոր.

$$24+15=43+36=134+235=326+253=$$

$$32+17=26+32=645+152=423+375=$$

112. Գումարենք 37 և 23 թվերը:

37-ին նախ ավելացնում ենք 3 միավոր, իսկ հետո  
2 սահմափոր,

$$37+23=37+3+20=40+20=60$$

113. Գումարենք 246 և 324 թվերը.

$$246+324=246+4+300+20=250+300+20=$$
  
$$=550+20=570$$

114. Լուծեցեք բանավոր.

$$75+15=56+64=124+346=257+343=$$

$$23+57=72+48=425+265=629+171=$$

$$51+39=93+67=372+128=516+284=$$

$$48+52=64+66=478+322=777+123=$$

115. Ի՞նչ փոփոխություն ե կրում գումարը, եթե  
մի գումարելին մեծացնենք 3 միավորով:

116. Ի՞նչ փոփոխություն ե կրում գումարը, եթե  
գումարելիներից մեկին ավելացնում ենք 4:

117. Ի՞նչ փոփոխություն ե կրում գումարը, եթե  
գումարելիներից մեկը փոքրացնում ենք 6 միավորով:

118. Ի՞նչ փոփոխություն ե կրում գումարը, եթե  
մի գումարելին մեծացնում ենք 2-ով, իսկ մյուսը՝ 5-ով:

119. Ի՞նչ փոփոխություն ե կրում գումարը, եթե  
մի գումարելին փոքրացնում ենք 3-ով, իսկ մյուսը՝ 4-ով:

120. Գումարենք 56 և 38 թվերը:

38-ը լրացնում ենք մինչև 40 (38-ին ավելացնում  
ենք 2): Գումարում ենք 56 և 40 թվերը: Սաացված  
գումարից (96) հանում ենք այն 2 միավորը, վար ավելացը ելինք 38-ին:

$$56+38=56+40-2=96-2=94.$$

121. Գումարենք 264 և 127 թվերը.

$$264+127=264+130-3=394-3=391.$$

122. Լուծեցեք բանավոր.

$$48+35=56+88=345+238=483+218=$$

$$64+27=67+34=257+126=179+348=$$

$$36+49=86+58=414+269=567+273=$$

123. Գումարեցեք 18 և 25 թվերը: Գումարը կփոխա-  
վի, յեթե փոխենք գումարելիների տեղերը և գումարենք  
25 և 18 թվերը:

124. Գումարենք 64, 18 և 16 թվերը:

Հարմար ե նախ 64-ին ավելացնել 16 և սաացված  
գումարին ավելացնել 18: Դրանց արդյունքը չի փոխվի.

$$64+18+16=64+16+18=80+18=98$$

125. Գումարենք 23+35+25 թվերը.

$$23+35+25=23+60=83.$$

126. Լուծեցեք բանավոր.

$$52+26+18=29+47+71=31+18+49=$$

$$36+27+23=34+73+27=57+38+62=$$

$$38+45+22=25+38+75=84+43+16=$$

$$37+56+43=36+24+58=38+112+56=$$

$$54+28+36=54+42+46=65+187+35=$$

$$93+38+42=28+68+52=89+464+36=$$

$$74+23+46=58+61+19=54+87+246=$$

$$29+48+52=67+79+33=98+76+224=$$

### ԳՐԱՎՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ

127. Մի մարզադետնից քաղեցին 2348 կգ խոտ,  
իսկ մյուսից 69 կգ ավելի: Ինչքան խոտ քաղեցին լերկ-  
րորդ մարզադետնից:

Այս խնդիրը լուծելու համար պետք է 2348-ը մեծացնել 69-ով:

Թիվը մի քանի միավորով մեծացնելու համար, պետք է կատարել գումարում, այսինքն 2348-ին պետք է ավելացնել 69:

Խնդրի լուծումը գրվում է աբազես:

$$\begin{array}{r} 2348 \\ + 69 \\ \hline 2417 \text{ (կդ)} \end{array}$$

Գրավոր գումարման ժամանակ սովորաբար գումարելիները գրում են սուսակի ձևով, միավորները գրում են միավորների տակ, տասնավորները՝ տասնավորների տակ և այլն.

Ստուգեցեք խնդրի լուծումը և արտապրեցեք տեսքում։

128. Լուծեցեք հետևյալ որինակները, թվերն իրար տակ գրելով. ստուգեցեք լուծումների ճշտությունը.

$$36\ 679 + 26\ 385 + 48\ 261 = 687 + 4754 + 38\ 276 =$$

$$28\ 685 + 74\ 928 + 36\ 276 = 734 + 57\ 486 + 795 =$$

$$72\ 365 + 8956 + 489 = 248 + 97\ 472 + 68\ 975 =$$

129. Լուծեցեք հետևյալ որինակները, թվերն իրար տակ գրելով.

$$68\ 234 + 368 + 5673 =$$

$$9248 + 48\ 267 + 968 =$$

$$428 + 67 + 8657 =$$

$$432\ 789 + 873\ 405 + 388\ 907 =$$

$$900\ 706 + 567\ 099 + 379\ 096 =$$

$$874\ 005 + 75\ 843 + 483 + 98\ 704 + 789\ 400 =$$

$$389 + 780\ 964 + 4938 + 400\ 765 + 9568 =$$

$$28 + 970\ 689 + 498 + 964\ 850 + 7985 =$$

130. Քաղաքի ռալոններից մեկում տարվա ընթացքում դպրոցների շինարարության վրա ծախսվեց 280 750 ռ., իսկ մյուս ռալոնում՝ 320 080 ռ. լեռորդ ռալոնում՝ 250 000 ռ. և չորրորդ ռալոնում՝ 400 500 ռ.: Ինչքան դրամ ծախսվեց դպրոցների շինարարության վրա այդ չորս ռալոններում։

131. Համաշխարհային պատերազմի պատճառած կորուստները.

Ցերկերներ	Սպանված, մահացած և անհետ կորած	Ցերկերներ	Սպանված, մահացած և անհետ կորած
Ռուսաստան	1 775 000	Իտալիա	428 000
Մեծ Բրիտանիա	993 000	Ավստրիա	1 742 000
Ֆրանսիա	1 358 000	Մնացած յերկրները	957 000
Գերմանիա	1 808 000		

Համաշխարհային պատերազմի ժամանակ ընդամենը քանի մարդ է սպանվել, մահացել և անհետ կորել:

132. 1913 թ. ցարական Ռուսաստանում կար 58 500 կմ լեռկաթուղի, իսկ 1932 թ. ԽՍՀՄ-ում՝ 24 691 կմ ավելի։ Ինչքան եր լեռկաթուղիների ընդհանուր լեռկարությունը 1932 թվին։

133. Ողացին հաղորդակցության ճանապարհների ընդհանուր լեռկարությունը ԽՍՀՄ-ում 1928 թ. կազմում եր 11 442 կմ, իսկ 1935 թվին՝ 34 167 կմ ավելի։ Ինչքան եր ողացին հաղորդակցության ճանապարհների ընդհանուր լեռկարությունը 1935 թ.։

134. Ամսվա առաջին կեսին խանութը վաճառեց 76 045 ռուբլու զանազան ապրանքներ, իսկ լեռորդ կեսի ընթացքում՝ 3826 ռ. ավելի։ Քանի ռուբլու ապրանք և վաճառվել ամբողջ ամսվա ընթացքում։

# ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ

## ԲԱՆԱՎՈՐ ՀԱՆՈՒՄ

135. Խանութում կար 98 ց կարտոֆիլ, վաճառվեց  
67 ց: Քանի տոնն կարտոֆիլ մնաց:  
Այն թիվը, վորից հանում են, կոչվում ե նվազելի:  
Այն թիվը, վորը հանում են, կոչվում ե հանելի:  
Հանումից ստացված թիվը կոչվում ե տարբերություն  
կամ մնացորդ:
136. Ի՞նչի լե հավասար տարբերությունը, լեթե նվա-  
զելին հավասար ե 148-ի, իսկ հանելին՝ 50-ի:
137. Առաջին որը խանութում վաճառեցին 54 ց  
կարտոֆիլ, իսկ լերկրորդ որը՝ 16 ց պակաս: Քանի  
ցենտներ կարտոֆիլ վաճառեցին լերկրորդ որը:
138. Առաջին որը խանութում վաճառեցին 54 ց  
կարտոֆիլ, իսկ լերկրորդ որը 38 ց: Յերկրորդ որը քա-  
նի ցենտներով պակաս կարտոֆիլ վաճառեցին, քան ա-  
ռաջին որը:
139. Ի՞նչ գործողություն պետք ե կատարել, վոր  
168-ը փոքրացվի 49-ով:
140. Ի՞նչ գործողություն պետք ե կատարվի, վոր  
իմանաք, թե 75-ը քանիսավ ե մեծ 26-ից, 39-ը քանի-  
սավ ե վորը 87-ից:
141. Ի՞նչի լե հավասար տարբերությունը, լեթե  
նվազելին հավասար ե 85-ի, իսկ հանելին նրանից 40-ով  
փոքր ե:
142. Ի՞նչի լե հավասար տարբերությունը, լեթե  
նվազելին հավասար ե 93-ի, իսկ հանելին 20-ով նրա-  
նից փոքր ե:
143. 57-ից հանեցեք 24:

57-ից նախ հանենք 2 տասնյակ, իսկ դրանից հետո  
4 միավոր.

$$57 - 24 = 57 - 20 - 4 = 37 - 4 = 33$$

144. 60-ից հանենք 43.

$$60 - 43 = 60 - 40 - 3 = 20 - 3 = 17$$

145. Լուծեցեք բանավոր.

47 - 30 =	42 - 32 =	86 - 52 =
53 - 20 =	84 - 44 =	98 - 35 =
74 - 40 =	97 - 27 =	70 - 32 =
87 - 50 =	78 - 57 =	90 - 64 =
65 - 25 =	63 - 41 =	40 - 23 =

146. Նվազելին հավասար ե 62-ի, իսկ հանելին հա-  
վասար ե 32-ի: Ի՞նչ փոփոխություն կկրի տարբերու-  
թյունը, յեթե նվազելին 5 միավորով մեծացնենք:

147. Նվազելին հավասար ե 48-ի, իսկ հանելին՝ 13-ի:  
Ի՞նչ փոփոխության կենթարկվի տարբերությունը, յեթե  
նվազելին 4 միավորով փոքրացնենք:

148. Նվազելին հավասար ե 56-ի, իսկ հանելին՝ 24-ի:  
Ի՞նչ փոփոխության կենթարկվի տարբերությունը, յեթե  
հանելին փոքրացնենք 4 միավորով:

149. Նվազելին հավասար ե 87-ի, իսկ հանելին՝ 45:  
Ի՞նչ փոփոխության կենթարկվի տարբերությունը, յեթե  
նվազելին մեծացնենք 2 միավորով:

150. Ի՞նչ փոփոխության կենթարկվի տարբերու-  
թյունը, յեթե հանելին ավելացնենք 6 միավոր:

151. 62-ից հանենք 38:

38-ը լրացնում ենք մինչև 40 (հանելին մեծացնում  
ենք 2 միավորով); 62-ից հանում ենք 40: Հանելին մե-  
ծացնում ենք 2 միավորով, ուստի տարբերությունը 2

միավորով փոքրացավ: Վորպեսզի հանձան արդյունքը չփոխվի, ստացված տարբերության ավելացնում ենք 2 միավոր:

$$62 - 38 = 62 - 40 + 2 = 22 + 2 = 24$$

152. 189-ից հանենք 96:

$$189 - 96 = 189 - 100 + 4 = 89 + 4 = 93.$$

153. Լուծեցեք բանավոր.

64 - 38 =	145 - 98 =	277 - 96 =	643 - 79 =
85 - 49 =	216 - 95 =	246 - 89 =	340 - 78 =
62 - 58 =	352 - 89 =	320 - 95 =	574 - 87 =
43 - 27 =	634 - 97 =	454 - 88 =	423 - 69 =
76 - 48 =	315 - 88 =	465 - 98 =	252 - 77 =

154. 257-ից հանենք 148:

148-ը լրացնում ենք մինչև 150: Այնուհետև վարակում ենք նույն ձեռվ, ինչպես 151-րդ խնդիրը լուծելիս:

$$257 - 148 = 257 - 150 + 2 = 107 + 2 = 109$$

155. 679-ից հանենք 387.

$$679 - 387 = 679 - 400 + 13 = 279 + 13 = 292$$

156. 724-ից հանենք 308.

$$\begin{aligned} 724 - 308 &= 724 - 300 - 8 = 424 - 8 = 424 - 10 + 2 \\ &= 414 + 2 = 416. \end{aligned}$$

157. Լուծեցեք բանավոր.

367 - 148 =	456 - 198 =	632 - 309 =
455 - 247 =	749 - 296 =	450 - 207 =
370 - 158 =	620 - 392 =	852 - 406 =
574 - 327 =	809 - 489 =	926 - 508 =

158. Բանվորուհին 75 ո. դրամ ուներ: Նա հագուստին վճարեց 38 ո., և կոշիկներին՝ 25 ո., ինչքան դրամ մնաց նրա մոտ:

Խնդիրը լուծելու համար, պետք է 75 ուռվլուց հանել 38 ո. և ստացված տարբերությունից հանել 25 ո.: Հեշտ ե նախ 75-ից հանել 25 և հետո՝ 38: Դրանից տարբերությունը չի փոխվի:

$$\begin{aligned} 75 - 38 - 25 &= 75 - 25 - 38 = 50 - 38 = 50 - 40 + 2 = \\ &= 10 + 2 = 12 \text{ (ո.)}: \end{aligned}$$

159. Կոլտնտեսականն ուներ 85 կգ միս: Նախ նա ծախսեց 36 կգ և հետո՝ 14 կգ: Ինչքան միս մնաց:

Խնդիրը լուծելու համար պետք է 85-ից հանել 36 և հետո ստացված տարբերությունից հանել 14:

Խնդիրն ավելի հեշտ ե լուծել ալսպես. նախ իմանալ, թե ընդամենը վորքան միս ե վաճառվել (36-ը գումարել 14-ի հետ), և դրանից հետո իմանալ, թե վորքան միս ե մնացել (85-ից հանել 50):

$$85 - 36 - 14 = 85 - 50 = 35 \text{ (կգ):}$$

160. Լուծեցեք բանավոր.

37 - 18 = 7 =	46 - 18 - 12 =	32 - 15 - 12 =
42 - 15 - 12 =	54 - 17 - 23 =	81 - 24 - 36 =
54 - 17 - 24 =	66 - 25 - 15 =	78 - 32 - 18 =

161. Բանվորը 47 ո. ծախսեց և 45 ո. ել մնաց նրա մոտ: Ինչքան փող ուներ նա:

Բանվորի ունեցած դրամի անհայտ թիվը նշանակենք  $x$  (իքս) տառով:

$$\begin{array}{rcl} \text{Խնդիրը} & \text{կարելի} & \text{լե} \quad \text{ալսպես} \quad \text{դրել} \\ x - & - & = 47 = 45 \\ \text{Նվազելի} & \text{հանելի} & \text{տարբերություն} \\ \text{Խնդիրը} & \text{լուծելու} & \text{համար} \quad \text{պետք} \quad \text{ե} \quad \text{դանել}, \quad \text{թե} \quad \text{ինչի} \\ & & \text{լե} \quad \text{հավասար} \quad x = ? \end{array}$$

$x - 47 = 45$ :  
| Նվազելին գտնելու համար պետք ե հանելիին ավելացնել տարբերությունը:  
 $x = 47 + 45 = 92$  (ո.):

162. ՅԵՐԵ հայտնի լե, թե վորքան և վճարվել ապ-  
րանքին և գնումից հետո վորքան դրամ և մնացել, ապա  
ինչպես իմանալ, թե ինչքան դրամ կար նախքան գնում  
կատարելը:

163. Ինչի՞ լե հավասար նվազելին, լեթե հանելին  
հավասար և 23-ի, իսկ տարբերությունը՝ 48-ի:

164. Բանվորն ուներ 96 ռ.։ Ինչքան փող ծախսեց  
նա, լեթե նրա մոտ մնաց 37 ռ.։

Խնդիրը կարելի լե ալսպես դրել.

$$96 - x = 37$$

Նվազելի	հանելի	տարբերություն
x-ը գտնելու համար 96-ից պետք է հանել 37։		
Հանելին գտնելու համար նվազելիից պետք է հանել տարբերությունը։		

$$x=96-37=59 \text{ (ռ.)։}$$

165. ՅԵՐԵ հայտնի լե թե ինչքան դրամ կար նախ-  
քան գնում կատարելը և ինչքան մնաց գնումից հետո,  
ապա ինչպես իմանալ, թե ինչքան դրամ և վճարվել  
գնում կատարելիս։

166. Ինչպես գտնել նվազելին, լեթե հայտնի լեն  
հանելին ու տարբերությունը։

167. Ինչպես գտնել հանելին, լեթե հայտնի լեն  
նվազելին ու տարբերությունը։

168. Գնացքն անցավ 47 կմ. մնաց անցնելու 56 կմ։  
Ընդունենք քանի կիումեար և անցնում գնացքը։

169. Կոշիկ գնելուց հետո մնաց 39 ռ.։ Ի՞նչ արժե  
կոշիկը, լեթե նախքան կոշիկ գնելը 85 ռ. կար։

170. Գտեք անհայտը (x)։ Լուծեցեք բանավոր։

$$x-37=28 \quad 72-x=35 \quad x-47=29$$

$$x-49=24 \quad 83-x=29 \quad 87-x=49$$

171. Կրկնակոշիկին ու կոշիկին վճարեցին 53 ռ.։

Կոշիկին վճարեցին 38 ռ.։ Ի՞նչքան վճարեցին կրկնակո-  
շիկին։

Խնդիրը կարելի լե դրել ալսպես.

$$x + 38 = 53$$

Գումարելի գումարելի գումար

x-ը գտնելու համար 53-ից պետք է հանել 38։

Անհայտ գումարելին գտնելու համար գումարից պետք  
է հանել հայտնի գումարելին։

$$x=53-38=15 \text{ (ռ.)։}$$

172. Շալվարին ու բլուզին վճարեցին 48 ռ.։ Շալ-  
վարին վճարեցին 30 ռ.։ Վորքան վճարեցին բլուզին։  
Խնդիրը կարելի լե դրել ալսպես.

$$30+x=48$$

x-ը գտնելու համար 48-ից պետք է հանել 30։

$$x=48-30=18 \text{ (ռ.)։}$$

173. Ինչպես պետք է գտնել լերկու գումարելինե-  
րից աեկը, լեթե հայտնի լեն գումարն ու մյուս գումա-  
րելին։

174. ՅԵՐԿՈՒ գումարելիների գումարը հավասար է  
78-ի։ Ինչի՞ լե հավասար լերկուրդ գումարելին, լեթե  
առաջին գումարելին հավասար է 57-ի։

175. ՅԵՐԵՔ գումարելիների գումարը հավասար է  
186-ի։ Ինչի՞ լե հավասար լերկուրդ գումարելին, լեթե  
առաջին լերկու գումարելիների գումարը հավասար է 78-ի։

176. Գտեք անհայտը (x)։ Լուծեցեք բանավոր։

$$x-56=16 \quad x-49=18 \quad 29+x=83$$

$$26+x=38 \quad 56+x=83 \quad x-16=54$$

$$48-x=25 \quad 85-x=27 \quad 36-x=18$$

$$x+48=72 \quad x+29=92 \quad x+47=59$$

$$64-x=18 \quad x-52=19 \quad 15+x=82$$

## ԳՈՒՄԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՆՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

177. 84-ին ավելացրեք 36: Ինչքան ստացվեց: Հատացված գումարից (120) հանեցեք 36: Ինչքան մնաց:

Ստացված գումարից (120) հանեցեք 84: Ինչքան մնաց:

Վորպեսզի ստուգենք, թե նի՞շ է կատարված յերկու թվերի գումարումը, պեսք է գումարից հանել գումարելիներից մեկը: Յեթե ստացվի յերկրորդ գումարելին, ապա գումարումը նիշ է կատարվել:

178. 95-ից հանեցեք 47: Ինչքան մնաց:

Ստացված տարբերության (48) ավելացրեք այն թիվը, վոր հանեցիք (47): Ինչքան ստացվեց:

Վորպեսզի ստուգենք, թե նի՞շ է կատարված հանումը, պեսք է տարբերությանը ավելացնենք հանելին: Յեթե ստացվի նվազելին, ապա հանումը նիշ է կատարվել:

179. Գումարեցեք 86 և 39 թվերը և այնուհետև հանման ողնությամբ ստուգեցեք, թե ճիշտ է կատարված գումարումը:

180. 97-ից հանեցեք 48 և այնուհետև գումարումով ստուգեցեք, թե ճիշտ է կատարված հանումը:

## ԳՐԱՎՈՐ ՀԱՆՈՒՄ

181. Պահեստում կար 42 050 ց ալիուր, բաց թողեցին 785 ց, ինչքան մնաց:

Այս խնդրում պետք է գտնել մնացորդը, իսկ մնացորդը գտնում են հանումով:

Ինդրի լուծումը գրիում է այսպես.

$$\begin{array}{r} 42\ 050 \\ - \quad 785 \\ \hline 41\ 265 \end{array} \quad (g)$$

Գրավոր հանումը, ինչպես և գումարումը, սկսում են միավորներից, հաջորդաբար անցնելով տասնավորներին, հարյուրավորներին և այլն:

Ստուգեցեք խնդրի լուծումը և արտադրեցեք տետրում:

182. Գրավոր հանման որինակներ.

42 367	7040	10 100	500 101
— 28 729	— 3937	— 9 192	— 309 102
13 638	3103	908	190 999

Ստուգեցեք լուծումները և արտադրեցեք տետրում:

183. Լուծեցեք հետևյալ որինակները.

78 645 — 35 957 =	54 750 — 36 487 =
52 431 — 27 684 =	37 200 — 24 898 =
35 789 — 6 897 =	75 400 — 73 402 =
857 451 — 564 892 =	10 100 — 9 101 =
362 143 — 86 987 =	100 101 — 10 102 =

184. Լուծեցեք հետևյալ որինակները և ստուգեցեք:

200 200 — 199 299 =	302 030 — 202 039 =
300 040 — 299 949 =	800 500 — 790 501 =
500 601 — 409 506 =	1 010 030 — 805 908 =
400 010 — 390 019 =	6 300 105 — 5 080 798 =
701 020 — 691 021 =	4 001 006 — 3 089 008 =

185. Գրեք անհալուը (x):

$x + 118 = 792$	$x - 405 627 = 500 309$
$437 408 + x = 900 200$	$100 506 - x = 91 298$
$x + 509 407 = 1 000 000$	$1 002 005 - x = 98 040$
$1 099 + x = 4 444$	$x - 3095 = 59 007$

186. Գումարման ժամանակ գումարելիներից մեկի մեջ 4 հազարավորի փոխարեն դրված է ? հազարավոր ինչպես և փոփոխվել գումարը:

187. Ի՞նչ փոփոխության ե լենթարկվել գումարը, լիթե գումարման ժամանակ գումարելիներից մեկի մեջ 9 հարյուրավորի տեղը դրված ե 5 հարյուրավոր, իսկ մյուսի մեջ 5 միավորի տեղը դրված ե 9 միավոր.

188. Ի՞նչ պետք ե անել, զոր ճիշտ գումարն ստացվի, լիթե գումարելու ժամանակ 846-ի փոխարեն ավելացրել են 900:

189. Ի՞նչ փոփոխության ե լենթարկվել տարբերությունը, լիթե հանելու ժամանակ հանելիի 7 թվանշանն ընդունել են 9-ի փոխարեն:

190. Պահանջում կար 17 600 ց հացահատիկ. բաց թողեցին 8 090 ց: Ինչքան հացահատիկ մնաց:

191. Խանութում կար 25 070 ց կարտոֆիլ, վաճառվեց 9 085 ց: Ինչքան կարտոֆիլ մնաց:

192. Կոլտնտեսությունը ցանեց 2 489 հա հաճար և դրանից 795 հա պակաս ցորեն, Քանի հեկաար ցորեն ցանվեց:

Խնդիրը լուծելու համար պետք ե գտնել մի թիվ, վորը 2 489-ից 795-ով փոքր ե:

Տված թից մի հանի միավորով փոքր թիվն ստանալու համար պետք ե կատարել հանում:

193. Առաջին որը մթերման կայան բերեցին 9 300 ց հացահատիկ, իսկ լիթերորդ որը 456 ց պակաս: Քանի ցենտներ հացահատիկ բերեցին լիթերորդ որը:

194. Արտի լիթեսավարի ազգեցությունը վարսակի բերքի վրա (1 հա-ի բերքը կիլոդրամներով):

Աշնանավա-		Գարնանավա-	
որի	ժամանակակի	ժամանակ	ժամանակ
Հատիկի ծղնոաչատիկի ծղնոա			
Առանց լիթեսավարի	+	1130	1350
Յերեսավարով	+	1350	1370
Բերքի աճումը լիթեսավարից	:	:	1210
	:	?	1500
	:	?	1320
	:	?	?

Հաշվեցեք բերքի աճումը լիթեսավարի հետեանքով:

195. ԽՍՀՄ-ի ցամաքալին սահմանների լերկարությունը հավասար է 21 665 կմ-ի, ջրալին սահմանների լերկարությունը՝ 43 335 կմ-ի: Ջրալին սահմանների լերկարությունը քանի կիլոմետրով է մեծ ցամաքալին սահմանների լերկարությունից:

Վորավեսզի իմանանք, թե մի թիվը մյուսից ինչքանով է մեծ, հանում պետք ե կատարենք:

196. ԽՍՀՄ-ի վողջ մակերեսը 21 154 000 հառ. կմ է, վորից ՌԽՖՍՀ-ը գրավում է 164 99 000 հառ. կմ: Վորքան և մնացած խորհրդավին հանրապետությունների տերիսորիան:

197. 1931 թ. վողջ ԽՍՀՄ-ի ազգաբնակչությունը կազմում եր 161 006 200 հոգի, վորից ՌԽՖԽՀ-ում՝ 110 932 500 հոգի: Վորքան եր մնացած խորհրդավին հանրապետությունների ազգաբնակչությունը:

198. Պահանջում կար 18 750 զուրդ կոշիկ: Առաջին որը պահեստից բաց թողեցին 9 675 զուրդ, իսկ լերկորդ որը՝ 2 568 զուրդ: Քանի զուրդ կոշիկ մնաց պահեստում:

199. Աւումնական տարվա սկզբին զպրցում կար 1 250 տետր: Տարվա ընթացքում գնեցին 1500 տետր և աշակերտներին բաժանեցին 2 374 տետր: Դպրոցում քանի տետր մնաց հաջորդ տարվա համար:

200. Բանվորն ստացավ 126 ռ., կոշիկի համար ծախսեց 40 ռ. և բնակարանի վարձ վճարեց 18 ռ.: Ինչքան փող մնաց նրա մոտ:

Խնդիրը լուծելու համար, նախ պետք ե իմանալ, թե նա ընդամենն ինչքան ծախսեց, իսկ դրանից հետո իմանալ, թե ինչքան փող մնաց նրա մոտ:

Լուծումը գրենք ալսպես:

$$126 - (40 + 18) = 126 - 58 = 68 \text{ (ռ.)}$$

Փակագծերը ցույց են տալիս, վոր նախ պետք է գումարել 40 և 18 թվերը, իսկ այնուհետեւ 126-ից հանել 58։

**201. Լուծեցեք բանավոր։**

$$\begin{array}{ll} 260 - (140 - 80) = & 276 - (560 - 380) = \\ 348 - (160 + 145) = & 800 - (350 + 128) = \\ 275 - (126 + 34) = & 600 - (736 - 180) = \\ 530 - (800 - 690) = & 950 - (1000 - 764) = \end{array}$$

**202. Լուծեցեք հետևյալ որինակները։**

$$\begin{array}{l} 12\,800 - (756 + 839 + 390) = \\ 8\,576 - (6000 - 485 + 673) = \\ 28\,000 - (30\,000 - 18\,736) = \\ 30\,850 - (7500 + 9\,040 - 2765) = \\ 50\,040 - (320\,500 - 290\,846) = \\ 70\,900 - (58\,750 + 20\,708 - 10\,389) = \end{array}$$

**203. 845-ից հանեցեք 254-ի և 362-ի գումարը։**

**204. 560-ից հանեցեք 328-ի և 243-ի տարրերությունը։**

**205. 4900-ից հանեցեք 2350-ի և 1860-ի գումարը։**

**206. 1700-ից հանեցեք 5800-ի և 4900-ի տարրերությունը։**

**207. Գնացքը պետք է անցներ 2390 կմ։ Առաջին որն անցավ 685 կմ, լերկը որը՝ 748 կմ։ Քանի կիլոմետր մնաց անցնելու։**

**208. Մթերման կարանում կար 4500 գ հացահատիկ։ Պետք է ուղարկվեր 1760 գ, բայց 74 գ պակաս ուղարկվեց։ Ի՞նչքան հացահատիկ մնաց։**

# ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ

## ԲԱՆԱՎՈՐ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

**209. Գործվածքի մեկ մետրն արժե 8 ռ., ի՞նչ արժե այդ գործվածքի 7 մ-ը։**

**Խնդիրը լուծելու համար, պետք է 8-ը վերցնել իբրև գումարելի 7 անգամ։**

Յերբ հարկ է լինում վորեվե թիվ իբրեվ գումարելի վեցնել մի խնի անգամ, ապա կիրառում են բազմապատճենում։

**Այն թվերը, վորոնց բազմապատճեն են, կոչվում են արտադրիչներ (առաջինը՝ բազմապատճելի, լերկը որդը՝ բազմապատճիչ)։ Բազմապատճան հետեանքով ստացված թիվը կոչվում է արտադրյալ։**

**210. Ի՞նչի լե հավասար արտադրյալը, լեթե բազմապատճելին հավասար է 25-ի, իսկ բազմապատճիչը՝ 7-ի։**

**211. Լուծեցեք հետևյալ որինակները։**

$$\begin{array}{cccc} 5 \times 7 = & 4 \times 7 = & 5 \times 6 = & 8 \times 8 = \\ 4 \times 8 = & 5 \times 8 = & 4 \times 6 = & 6 \times 9 = \\ 3 \times 9 = & 6 \times 8 = & 3 \times 7 = & 5 \times 9 = \\ 6 \times 7 = & 4 \times 9 = & 8 \times 6 = & 7 \times 6 = \\ 5 \times 9 = & 8 \times 7 = & 9 \times 7 = & 9 \times 8 = \\ 7 \times 8 = & 9 \times 6 = & 8 \times 9 = & 7 \times 9 = \end{array}$$

**212. Սատինի մետրն արժե 5 ռ., իսկ մահուդի մետրը 6 անգամ թանգ է։ Ի՞նչ արժե մահուդի մետրը։**

**Խնդիրը լուծելու համար, պետք է 5-ը մեծացնել 6 անգամ։**

Յերեւ պետք է վորեվե թիվ մեծացնել մի խնի անգամ, ապա բազմապատճեն են կտարում։

213. Ի՞նչ գործողություն պետք ե կատարենք, վոր-  
պեսզի թիվը մեծացնենք 5 անգամ, 9 անգամ, 24 ան-  
գամ:

214. Ի՞նչ գործողություն պետք ե կատարենք, վոր-  
պեսզի թիվը մեծացնենք 8-ով, 36-ով, 159-ով:

215. Պետք ե խմանալ հետեւալ գումարելիների գու-  
մարները.

$$1) 12+12+12+12+12=$$

$$2) 18+25+38+14+15=$$

Այս որինակներից վերի մեջ գումարումը կարելի է բազմապատկումով:

216. 60-ը բազմապատկենք 8-ով:

60-ը—այդ 6 տասնյակ ե: 6 տասնյակը բազմապատ-  
կում ենք 8-ով, սասանում ենք 48 տասնյակ, կամ  $480: 60 \times 8 = 6$  տասնյակ  $\times 8 = 48$  տասնյակ  $= 480:$

217. 16-ը բազմապատկենք 4-ով:

16-ը պարունակում ե 1 տասնյակ և 6 միավոր: 1  
տասնյակն (10) առանձին բազմապատկենք 4-ով, կը ս-  
տանանք 40, և 6 միավորն ել առանձին բազմապատկենք  
4-ով, կստանանք 24: Ստացված արտադրաները (40 և  
24) գումարենք:

$$1) 10 \times 4 = 40; 2) 6 \times 4 = 24; 3) 40 + 24 = 64:$$

218. Լուծեցեք բանավոր.

$$40 \times 2 = 32 \times 3 = 14 \times 6 = 58 \times 8 =$$

$$60 \times 4 = 24 \times 2 = 17 \times 5 = 47 \times 5 =$$

$$70 \times 6 = 33 \times 3 = 23 \times 4 = 56 \times 6 =$$

$$90 \times 7 = 21 \times 4 = 18 \times 5 = 67 \times 5 =$$

$$80 \times 9 = 13 \times 3 = 16 \times 6 = 54 \times 8 =$$

219. 48-ը բազմապատկենք 6-ով.

$$1) 40 \times 6 = 240; 2) 8 \times 6 = 48; 3) 240 + 48 = 288.$$

220. 68-ը բազմապատկենք 8-ով.

$$1) 60 \times 8 = 480; 2) 8 \times 8 = 64; 3) 480 + 64 = 480 + 20 + 44 = 500 + 44 = 544.$$

221. Լուծեցեք բանավոր.

$$47 \times 6 = 15 \times 8 = 25 \times 4 = 67 \times 9 =$$

$$38 \times 7 = 17 \times 6 = 35 \times 6 = 86 \times 7 =$$

$$94 \times 9 = 18 \times 7 = 65 \times 8 = 78 \times 8 =$$

$$73 \times 8 = 16 \times 9 = 45 \times 7 = 89 \times 9 =$$

$$69 \times 7 = 19 \times 8 = 75 \times 9 = 79 \times 7 =$$

222. Ինչի՞ յե հավասար արտադրանը, յեթե արտա-  
դրիչներից մեկը հավասար է 30-ի, իսկ մյուսը՝ 8-ի:

223. Արտադրալում ինչ կստանանք, յեթե 0-ն բազ-  
մապատկենք 7-ով:

224. Արտադրալում ինչ կստանանք, յեթե 8-ը բազ-  
մապատկենք 0-ով:

225. 97-ը բազմապատկենք 6-ով:

97-ը լրացնում ենք մինչև հարյուր (97-ին ավելաց-  
նում ենք 3) և 100-ը բազմապատկում ենք 6-ով: Ստա-  
նում ենք 600:

Բազմապատկելին (97) մեծացնենք 3-ով: 100-ը 6-ով  
բազմապատկելիս 3-ը վերցրինք 6 անգամ, հետեւբար  
ստացված արտադրանը (600-ը) վորոնելի արտադրանից  
մեծ է  $3 \times 6 = 18$ -ով:

Վորոնելի արտադրանը ստանալու համար, պետք է  
600-ից հանել 18: Կստանանք  $600 - 18 = 582:$

$$1) 97 + 3 = 100; 2) 100 \times 6 = 600; 3) 3 \times 6 = 18;$$

$$4) 600 - 18 = 582.$$

226. 78-ը բազմապատկենք 7-ով.

$$\begin{array}{lll} 1) 78+2=80; & 2) 80\times 7=560; & 3) 2\times 7=14; \\ 4) 560-14=546. \end{array}$$

227. Բազմապատկելին մեծացված և 5-ով: Բաղմապատկելի հավասար և 6-ի: Ինչքանով և մեծացել արտադրյալը:

228. Բազմապատկելի հավասար և 4-ի: Բազմապատկելին ավելացրել են 7: Ինչքանով և ավելացել արտադրյալը:

229. Լուծեցեք բանավոր.

$$\begin{array}{llll} 99\times 8= & 79\times 6= & 98\times 7= & 89\times 7= \\ 98\times 6= & 89\times 7= & 69\times 8= & 98\times 8= \\ 97\times 9= & 88\times 9= & 96\times 9= & 78\times 9= \end{array}$$

230. Պետք ե 18-ը բազմապատկել 9-ով և ստացված արտադրյալը նորից բազմապատկել 5-ով: Կստանանք՝

$$18\times 9\times 5=162\times 5=810.$$

Փոխենք արտադրիչների տեղերը և 18-ը բազմապատկենք 5-ով, ստացված արտադրյալը բազմապատկենք 9-ով: Կստանանք՝

$$18\times 5\times 9=90\times 9=810.$$

| Արտադրիչների տեղերը փոխելուց արտադրյալը չի փոխվում:

Արտադրիչների տեղերի փոխելը տվյալ որինակում բազմապատկում կատարելը, հեշտացրեց:

231. Կատարենք հետեւյալ բազմապատկումը՝

$$7\times 25\times 4:$$

$$7\times 25\times 4=25\times 4\times 7=100\times 7=700.$$

232. Լուծեցեք բանավոր.

$$\begin{array}{lll} 18\times 7\times 5= & 27\times 5\times 2= & 15\times 9\times 4= \\ 25\times 9\times 4= & 34\times 3\times 5= & 22\times 7\times 5= \\ 35\times 6\times 2= & 45\times 5\times 2= & 24\times 4\times 5= \end{array}$$

233. 1400-ը բազմապատկենք 8-ով:

1400-ը 14 հարյուրակ ե: 14 հարյուրակ ը բազմապատկենք 8-ով, կստանանք 112 հարյուրակ, կամ 11 200: 1400\times 8=14 հարյուրակ\times 8=112 հարյուրակ=11 200:

234. 608-ը բազմապատկենք 6-ով:

608-ը պարունակում ե 6 հարյուրավոր և 8 միավոր: 6 հարյուրավորն առանձին բազմապատկենք 6-ով և 8 միավորն առանձին, դումարենք ստացված արտադրյալները (36 հարյուրավոր և 48 միավոր): Կստանանք 3648:

$$1) 600\times 6=3\,600; \quad 2) 8\times 6=48; \quad 3) 3\,600+48=3648$$

235. Լուծեցեք բանավոր.

$$\begin{array}{llll} 700\times 8= & 9\,000\times 7= & 104\times 7= & 601\times 7= \\ 800\times 9= & 7\,000\times 8= & 108\times 6= & 703\times 8= \\ 1\,400\times 7= & 11\,000\times 9= & 107\times 9= & 805\times 6= \\ 1\,600\times 8= & 12\,000\times 6= & 204\times 5= & 902\times 9= \\ 1\,300\times 9= & 27\,000\times 8= & 209\times 8= & 504\times 8= \end{array}$$

236. Լուծեցեք բանավոր.

$$\begin{array}{lll} 1\,004\times 6= & 2\,009\times 8= & 4\,008\times 8= \\ 1\,008\times 7= & 3\,007\times 9= & 7\,009\times 9= \\ 1\,007\times 9= & 3\,008\times 7= & 8\,007\times 8= \end{array}$$

237. Լուծեցեք բանավոր.

$$\begin{array}{llll} 78\times 10= & 348\times 10= & 70\times 100= & 60\times 1\,000= \\ 35\times 100= & 57\times 1000= & 108\times 10= & 209\times 100= \end{array}$$

238. Ի՞նչ պետք ե անել, վոր թիվը բազմապատկի 10-ով, 100-ով, 1 000-ով:

239. Առանց բազմապատկումը կատարելու ասացեք, թե արտադրյալի վերջում քանի՞ զերո կլինի, ի՞թե բազմապատկենք 700-ը 30-ով, 8000-ը 600-ով, 3400-ը 80 000-ով, 12 700-ը 80-ով: Բազմապատկումով ստուգեցեք լուրաքանչւուր պատասխանի ճշտությունը:

**240. Լուծեցեք բանավոր-**

$$\begin{array}{llll} 1400 \times 6 = & 170 \times 60 = & 3800 \times 60 = & 600 \times 700 = \\ 2300 \times 8 = & 360 \times 90 = & 5600 \times 80 = & 800 \times 600 = \\ 3200 \times 9 = & 280 \times 70 = & 1900 \times 70 = & 700 \times 800 = \\ 4800 \times 7 = & 190 \times 80 = & 2700 \times 90 = & 900 \times 500 = \end{array}$$

**ԳՐԱՎՈՐ ԲԱԶՄԱՎԱՏԿՈՒՄ**

241. Ցեխում կա 89 բանվոր: Մի բանվորն ամսական միջին հաշվով տալիս է 1296 ռ. արտադրանք: Կորքան և ցեխի ամսական արտադրանքը:

Խնդիրը լուծելու համար, պետք է 1296-ը բազմապատկել 89-ով: Խնդրի լուծումը գրվում է այսպես՝

$$\begin{array}{r} 1296 \\ \times 89 \\ \hline 11664 \\ + 10368 \\ \hline 115344 \quad (\text{ռ.}) \end{array}$$

Յերկանիշ թվով բազմապատկելու ժամանակ, նախ բազմապատկում են բազմապատկիչի միավորներով, դրանից հետո բազմապատկիչի տասնավորներով, իսկ հետո զումարում են ստացված արտադրաները:

490. Այս դիագրամն (նկ. 21) արտանկարեցեք տեսաբում և նրա սլունակների գլխին գրեցեք, քանի մելիոն քառակուսի կիլոմետրի լե հավասար լուրաքանչյուր աշխարհամասի մակերեսը:

491. 22-րդ նկարի վրա տված է ԽՍՀՄ-ի ազգաբընակության խտությունն ըստ հանրապետությունների: Սլունակների գլխին գրված թվերը ցուցում են տակիս, թե հանրապետության լուրաքանչյուր 10 կմ<sup>2</sup>-ին քանի հողի լե ընկնում: Դիագրամի թվերով աղյուսակ կազմեցեք:



Նկ. 22.

492. Դպրոցի աշակերանների թիվը ըստ առանձին դասարանների:

Դասարան	Ա	Բ	Գ	Դ	Ե
Աշակերանների թիվը յարաքանչյուր դասարանում	20	24	27	30	28

Այս աղյուսակի թվերով դիագրամ կազմեցեք, յուշ բաքանչութ աշակերտի փոխարեն ընդունելով տետրի մեկ վահագակ.

493.	ԽՍՀՄ-ի գլխավոր գետերի լերկարությունները.
Ոբ	5200 կմ
Ամուր	4500 կմ
Կենա	4600 կմ
Դնեպր	2100 կմ
Վոլգա	3600 կմ
Դնի	1800 կմ
Յենիսեյ	4000 կմ
Ոկա	1400 կմ
Աղյուսակի տվյալներով դիագրամ գծեցեք, 2 մմ-ն ընդունելով 100 կմ-ի փոխարեն:	

494.	ԽՍՀՄ-ի լերկաթուղարին ցանցը (1931 թ.).
ՌևժՍՀ	56 197 կմ
ԲԻՍՀ	2586 կմ
ՈՒԽՍՀ	13 780 կմ
մյուս հանրապ.	5863 կմ
Աղյուսակի տվյալներով դիագրամ գծեցեք:	
495.	Գլխավոր լերկաների աղդաբնակությունը 1931 թ. (հազարներով).

Գերմանիա	64 100	ԽՍՀՄ	161 040
Ֆրանսիա	41 800	Չինաստան	452 700
Անգլիա	45 900	Հնդկաստան	352 300
Իտալիա	41 100	Ճապոնիա	64 700
Լեհաստան	32 200	ԱՄՆ	123 600


Թվերը դասավորեցեք նվազման կարգով և նրանցով դիագրամ կազմեցեք:

496. Քարածխի հանուլթը Դոնբասում (միլիոն տոնն ներով):

1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
30	40	44	50	60

Աղյուսակից լերեռում ե, թե ըստ տարիների ինչպիս է փոխվել հանված քարածխի քանակը:

Վորպեսզի ավելի դիտողաբար ցուց տան, թե ինչպես ե փոխվում քարածխի հանուլթի քանակը, աղյուսակի թվերը պատկերում են ուղիղ գծերի հատվածներով և այդ հատվածների վերեկի ծալրերը միացնում են ուղիղ գծերով (նկ. 23):




Մեր գրաֆիկը ցուց է տալիս քարածխի հանուլթի հաջորդական փոփոխությունները ըստ աղյուսակի ընթացքում, ապա գծում են վոչ թե դիագրամ, այլ գրաֆիկ:

Գրաֆիկը գծում են ալպես, վանդակավոր թղթի վրա գծում են մի ուղիղ գիծ, և այդ գծի վրա իրարից հավասար հեռավորության վրա այնքան կետ են նշանակում, քանի թիվ կա աղյուսակում: Այդ կետերով տանում են ուղիղ գծեր, նախորոք հաշվելով, թե ինչ լերկարություն պետք է ունենան այդ գծերը: Մեր որինակի համար գծերի 1 մմ լերկարությունը համապատասխանում է 1 միլ. տոննի:

Ստուգեցեք, ճիշտ ե զծագրված գրաֆիկը (նկ. 23):

497. 24-րդ նկարի վրա արված ե Մոսկվայի մարդում ամսական միջին տեղումների գրաֆիկը: Ցույց տվեք. 1) Քանի միլիմետրի յև հավասար տեղումների



քանակին առըիլին, մալիսին, սեպտեմբերին, գեկտեմբերին. 2) տարվա մեջ վնր ամսին ե ամենից շատ տեղում թեղեւ վոր ամսին ամենից քիչ. վնր ամսին տեղումների քանակը հավասար է 47 մմ-ի:

498. Կոլտնտեսությունների թվի աճումը ԽՍՀՄ-ում:

Տարբերակ	1929	1930	1931	1932	1933	1934
Կոլտնտեսությունների թիվը	57 000	85 900	211 100	211 050	224 500	233 350

Նկարեցեք կոլտնտեսությունների թվի աճման գրաֆիկը:

499. Ծանր արդյունաբերության աճումը ԽՍՀՄ-ում (միլ. ոռոքիներով):

Տարբերակ	1929	1930	1931	1932	1933	1934
Համախառն արտադրանքը	21 204	27 699	34 159	38 831	42 041	50 568

Գծագրեցեք ԽՍՀՄ-ի ծանր արդյունաբերության համախառն արտադրանքի աճման գրաֆիկը:


500. Պողպատի համաշխարհային միջին ամսական արտադրանքը 14 գլխավոր կապիտալիստական լերկներում (հազար տոններով):

1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
9267	7125	5111	3125

Այս տվյալներով գրաֆիկ զծագրեցեք:

ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25-րդ գծագրի վրա պատկերված են 2րջաններ: Առաջին քրջանը բաժանված է յերկու հավասար մասի: Յուրաքանչյուր մաս կոչվում է լրիվ 2րջանի կեսը: Կեսը, կամ մեկ յերկը գրվում է այսպես՝  $\frac{1}{2}$ :



Նկ. 25.

Յերկը ըրջանը բաժանված է յերեք հավասար մասի: Յուրաքանչյուր մասը կազմում է լրիվ 2րջանի մեկ յերրորդը: Մեկ յերրորդը, կամ մեկ յերրորդ մասը, գրվում է այսպես՝  $\frac{1}{3}$ :

Այս 2րջանի յերկու մասը, կազմում են լրիվ 2րջանի յերկու յերրորդը: Յերկու յերրորդը գրվում է այսպես՝  $\frac{2}{3}$ :

Յերրորդ ըրջանը բաժանված է հինգ հավասար մասերի: Յերրորդ ըրջանի յուրաքանչյուր մասը կազմում է ամբողջ 2րջանի

մեկ հինգերորդը: Մեկ հինգերորդը գրվում է այսպես՝  $\frac{1}{5}$ :

Յերրորդ ըրջանի չորս մասերը կազմում են լրիվ 2րջանի չորս հինգերորդը: Չորս հինգերորդը գրվում է այսպես՝  $\frac{4}{5}$ :

Միավորի մեկ կամ մի քանի հավասար մասերը կոչվում են կոտորակներ:  $\frac{1}{2}; \frac{1}{3}; \frac{2}{3}; \frac{1}{5}; \frac{4}{5}$  թվերը կոչվում են կոտորակներ:

Այն թիվը, վորը ցույց է տալիս, թե քանի հավասար մասերի յի բաժանվել միավորը, կոչվում է կոտորակի նայտարար և գրվում է գծիկի տակը:

Այն թիվը, վորը ցույց է տալիս, թե միավորի քանի հավասար մասն ե վերցված, կոչվում է կոտորակի նամարիչ: Համարիչը գրվում է գծիկի վերնում:

501. Պարանը քանի հավասար մասի պետք ե բաժանել վոր նրանից ստացվի: 1) մեկ քառորդ, 2) մեկ յերրորդ, 3) մեկ վեցերորդ մաս:

502. Մետրի վեր մասն ե կազմում 1 դմ-ը, 3 դմ-ը, 7 դմ-ը, 9 դմ-ը:

503. Մեկ լիտր կերոսինը (նավթը) կերոսինայի մեջ այրվում է 7 ժամում: Մեկ լիտր կերոսինի վեր մասն ե այրվում 1 ժամում, 2 ժամում, 3 ժամում, 4 ժամում, 5 ժամում, 6 ժամում: Ստացված կոտորակները գրեցեք թվանշաններով:

504. Լրիվ որվա վեր մասն ե կազմում: 1 ժամը, 5 ժամը, 7 ժամը, 11 ժամը, 19 ժամը: Որվա մասերը գրեցեք կոտորակների ձևով:

505. Տարվա վեր մասն ե կազմում 1 կվարտալը, 3 կվարտալը: Տարվա վեր մասն ե կազմում: 1 ամիսը, 5 ամիսը:

506. Մետրի վեր մասն ե կազմում 1 սմ-ը, 4 սմ-ը, 16 սմ-ը, 67 սմ-ը: Գրեցեք ստացված կոտորակները:

507. Թվանշաններով գրեցեք հետևյալ կոտորակները: Կես, յերկու յերրորդ, յերեք քառորդ, յերկու հինգերորդ, հինգ ութերորդ, յոթ տասներկուերորդ, ութ տասնհինգերորդ, տասնմեկ տասնվեցերորդ:

508. Շըշանի կոլտնտեսությունները ցանեցին ցանքի ամբողջ աարածության յերեսունյոթ հիսուններորդ մասը, մենա-

տընտեսները — չորս քսանհինգերորդ մասը, խորհունտեսությունոները — մեկ տասերորդ մասը: Կողանտեսությունները խորհունտեսությունների հետ միասին ցանցին ցանքի ամբողջ տարածութեան քսանմեկ քսանհինգերորդ մասը: Թվանշաններով գրեցեք այս խնդրում պատահած կոտորակները:

$$509. \text{Կարդացեք} \quad \text{հետեւյալ} \quad \text{կոտորակները}, \quad \frac{3}{4}, \frac{7}{8}, \frac{4}{9}, \\ \frac{5}{17}, \frac{11}{12}, \frac{5}{16}, \frac{8}{19}, \frac{16}{21}$$

510. Բանջարաբուծության մեջ մի մարդու համար որական որինակելի նորման ե.  $\frac{1}{2}$  հա վար լերկիսովանի գութանով, վարունգի ցանքս  $\frac{1}{5}$  հա, բանջարանոցային կուլտուրաների փըխացում և քաղճան  $\frac{1}{17}$  հա, սեխի ցանքս  $\frac{1}{4}$  հա, բահով կարտոֆիլ տնկել՝  $\frac{1}{12}$  հա, բահով փորելով կարտոֆիլ հավաքել՝  $\frac{1}{16}$  հա: Բախչային կուլտուրաների փխրացման և քաղճանի  $\frac{1}{8}$  հա: Կարդացեք այստեղ պատահած կոտորակները:

$$511. \text{Ցույց} \quad \text{ավեք} \quad \text{հետեւյալ} \quad \text{կոտորակներից} \quad \text{յուրաքանչյուրի} \quad \text{համարիչն} \quad \text{ու} \quad \text{հայտարարը}. \frac{3}{4}, \frac{7}{12}, \frac{8}{15}$$

512. Գրեցեք այն կոտորակը, զորի 1) համարիչը 8 ե, իսկ հայտարարը՝ 15; 2) համարիչը 7 ե, իսկ հայտարարը՝ 32; 3) համարիչը 9 ե, իսկ հայտարարը՝ 50: Կարդացեք ստացված կոտորակները:

513. Բանի՞ հավասար մասերի յեն բաժանել խնձորը և քառի՞ այզպիսի մաս և վերցված, յեթե վերցվել ե.  $\frac{3}{4}$  խնձոր:

514. Մետաղալարի կտորը բաժանեցին 8 հավասար մասերի և վերցրին 5 մաս: Մետաղալարի վոր մասը վերցրին:

515. Բանի՞ հավասար մասի յի բաժանված հացը և քանի՞ մաս և վերցված յեթե վերցրել են՝  $\frac{3}{5}$  հաց,  $\frac{5}{9}$  հաց  $\frac{7}{12}$  հաց:

516. 3 թերթ թուղթը պետք է հավասարապես բաժանեն 5 աշակերտի: Ինչը մն թուղթ կտանա ամեն մեկ աշակերտը: Թղթի թերթերի թիվը ավելի քիչ ե, քան աշակերտների թիվը, այդ պատճառով ել լուրաքանչյուր աշակերտին լրիվ թերթ չի հասնում:

Յուրաքանչյուր թերթը 5 աշակերտին բաժանենք հավասարապես: Յուրաքանչյուր աշակերտը 1 թերթից կսամանա-

$$\text{թերթ,} \quad \text{իսկ} \quad 3 \quad \text{թերթից} - \frac{3}{5} \quad \text{թերթ:}$$

Խնդրի լուծումը գրենք այսպես՝ Յ : Յ =  $\frac{3}{5}$ :

$\frac{3}{5}$  կոտորակը մենք ստացանք Յ-ը Յ-ի վրա բաժանենք հետեւանքով:

Բաժանելին գրված ե իրեն կոտորակի համարիչ, իսկ բաժանարարը՝ իրեն հայտարար:

517. 1 թերթ թուղթը հավասարապես բաժանված ե 4 աշակերտի: Թերթի վոր մասն և ստանում ամեն մի աշակերտը:

518. Մի թերթ թղթի վոր մասն և ստանում 4 աշակերտներից ամեն մեկը, յեթե նրանց միջի հավասարապես բաժանված ե 3 թերթ թուղթ:

519. 4 կգ հացը հավասարապես բաժանեցին 5 բանվորի կիլոգրամի վոր մասն ստացավ յուրաքանչյուր բանվորը:

520. Հասարակ կոտորակի ձեռվ գրեցեք հետեւյալ թվերի բաժանման արդյունքները:

$$3:5= \quad 5:7= \quad 7:9= \quad 23:45= \\ 7:8= \quad 6:11= \quad 4:15= \quad 36:85=$$

521. 5 մ յերկարություն ունեցող պարանը բաժանեցին 6 հավասար մասերի: Ինչի՞ լի հավասար մի մասի յերկարությունը:

522. Մի քանոնի յերկարությունը հավասար է  $\frac{3}{10}$  մ-ի, իսկ մյուսինը՝  $\frac{4}{10}$  մ-ի: Վոր քանոնն ե յերկար:

Յերկու քանոնի յերկարությունն ել արտահայտված ե

տասերորդական մասերով (յերկու կոտորակները հավասար հայտարարներ ունեն):

Առաջին կոտորակն ունի 3 տասերորդական մաս, իսկ յերկրորդը 4 տասերորդական մաս:

Յերկրորդ կոտորակը մեծ է առաջինից:

Հավասար հայտարարներ ունեցող յերկու կոտորակներից այն կոտորակն է մեծ, վորի համարից մեծ է:

523. Վար կոտորակն է մեծ.  $\frac{4}{5} \cdot \text{լ } \frac{3}{5} \cdot \text{լ } \frac{3}{8} \cdot \text{լ } \frac{5}{8} \cdot \text{լ } \frac{5}{12}$

524. Հետեւյալ կոտորակները դասավորեցեք նրանց մեծության կարգով, սկսելով ամենափոքրից:

$$\frac{8}{12}, \frac{11}{12}, \frac{4}{12}, \frac{9}{12}, \frac{1}{12}, \frac{7}{12}, \frac{5}{12}, \frac{2}{12}$$

525. Տված են  $\frac{7}{20}, \frac{9}{20}, \frac{17}{20}, \frac{3}{20}, \frac{13}{20}$  կոտորակները: Այդ տեղից արտադրեցեք ամենամեծ և ամենափոքր կոտորակը:

526. Մեկ կտոր յուղը կշռում է  $\frac{3}{5}$ կգ, իսկ մյուսը՝  $\frac{3}{4}$  կգ: Վար կտորն է մեծ:

Այդ կոտորակներն արտահայտված են տարբեր մասերով (*նրանց հայտարարները տարբեր են*): Յերկու կոտորակների մասերի թիվը միևնույնն է (այդ կոտորակների համարիչները միևնույնն են): Կիրագրամի չորրորդ մասերն ավելի մեծ են քան հինգերորդ մասերը:

Յերկրորդ կոտորակը մեծ է առաջինից:

Հավասար համարիչ ունեցող յերկու կոտորակներից այն կոտորակն է մեծ, վորի հայտարարը փոքր է:

527. Վար կոտորակն է փոքր.  $\frac{3}{5} \cdot \text{լ } \frac{3}{7} \cdot \text{լ } \frac{7}{12} \cdot \text{լ } \frac{7}{13} \cdot \text{լ }$

528. Հետեւյալ կոտորակները դասավորեցեք նրանց մեծության կարգով, սկսելով ամենափոքրից:

$$\frac{7}{12}, \frac{7}{20}, \frac{7}{25}, \frac{7}{10}, \frac{7}{11}, \frac{7}{16}, \frac{7}{8}, \frac{7}{40}$$

529. Տված են  $\frac{3}{4}, \frac{3}{16}, \frac{3}{7}, \frac{3}{18}, \frac{2}{20}, \frac{3}{8}$  կոտորակները: Գրեացեք ամենամեծ և ամենափոքր կոտորակը:

530. Քանի՞ չորրորդ մաս կա 1 միավորի մեջ:

531. Քանի՞ վեցերորդական մաս կա 1 միավորի մեջ:

532. 1 միավորն արտահայտեցեք հինգերորդական մասերով:

533. 1 միավորն արտահայտեցեք ութերորդական մասերով:

534. 1 միավորն արտահայտեցեք տասերորդական մասերով:

535. Մի ժապավենի յերկարությունը հավասար է  $\frac{4}{5}$  մ-ի: Իսկ մյուսինը՝ 1 մ-ի: Վար ժապավենն է փոքր:

1 մ-ը հավասար է  $\frac{5}{5}$  մ-ի;  $\frac{4}{5}$  մ-ը փոքր է  $\frac{5}{5}$  մ-ից: Հետևաբար,  $\frac{4}{5}$  մ-ը փոքր է 1 մ-ից:

536.  $\frac{7}{8}$  կոտորակը բաղդատենք 1-ի հետ: Վարն է փոքր:

1-ը արտահայտենք միավորի ութերորդական մասերով:  $1 = \frac{8}{8}; \frac{7}{8}$  փոքր է  $\frac{8}{8}$  ից: Հետևաբար,  $\frac{7}{8}$  ը փոքր է 1-ից:

$\frac{4}{5}$  և  $\frac{7}{8}$  կոտորակներից յուրաքանչյուրը փոքր է 1-ից (այդ կոտորակների համարիչները փոքր են նրանց հայտարարներից):

Միավորից փոքր կոտորակը կոչվում է կանոնավոր կոտորակ:

537. Վարն է շատ.  $\frac{5}{4}$  կգ-ը թե 1 կգ-ը:

1 կգ =  $\frac{4}{4}$  կգ,  $\frac{5}{4}$  կգ-ը շատ է  $\frac{4}{4}$  կգ-ից: Հետևաբար,  $\frac{5}{4}$  կգ-ը շատ է 1 կգ-ից:

538.  $\frac{11}{8}$  կոտորակը համեմատենք 1-ի հետ: Վարն է մեծ:

1-ն արտահայտենք միավորի ութերորդական մասերով:  $1 = \frac{8}{8}; \frac{11}{8}$  մեծ է  $\frac{8}{8}$  ից: Հետևաբար  $\frac{11}{8}$  ը մեծ է 1-ից:

$\frac{5}{4}$  և  $\frac{11}{8}$  կոտորակներից յուրաքանչյուրը մեծ է 1-ից (այդ

կոտորակների համարիչները մեծ են նրանց հայտարարներից),  
Միավորից մեծ կոտորակը կոչվում է անկանոն կոտորակ:

539.  $\frac{4}{4}$  և  $\frac{8}{8}$  կոտորակները բազումենք 1-ի հետ:

$$\frac{4}{4} = 1 \text{ և } \frac{8}{8} = 1$$

$\frac{4}{4}$  և  $\frac{8}{8}$  կոտորակներից ամեն մեկը հավասար է 1-ի (այդ  
կոտորակների համարիչները հավասար են նրանց հայտարար-  
ներին),

Միավորին հավասար կոտորակն ել կոչվում է անկանոն կո-  
տորակ:

Կանօնավոր է կոչվում այնպիսի կոտորակը, վորը փոքր է 1 միա-  
վորից (կոտորակի համարիչը փոքր է հայտարարից), որինակի  
համար  $\frac{3}{4}$ -ը):

Անկանոն է կոչվում այնպիսի կոտորակը, վորը հավասար է 1  
միավորի կտում մեծ է 1 միավորից (համարիչը հավասար է հայտա-  
րարին կամ մեծ է նրանից, որինակի համար  $\frac{5}{5}$ -ը,  $\frac{7}{4}$ -ը):

540. Տված են  $\frac{3}{7}$ ,  $\frac{7}{5}$ ,  $\frac{2}{9}$ ,  $\frac{6}{6}$ ,  $\frac{8}{3}$ ,  $\frac{3}{8}$ ,  $\frac{7}{7}$  կոտորակ-  
ները. Առանձին արտագրեցեք այն կոտորակները, վորոնք փոքր  
են միավորից, վորոնք հավասար են միավորին, վորոնք մեծ են  
միավորից:


541. Հետեւյալ կոտորակներից առանձին արտագրեցեք սկզբ-  
բում կանոնավոր և հետո անկանոն կոտորակները:

$$\frac{2}{2}, \frac{3}{3}, \frac{4}{3}, \frac{4}{4}, \frac{3}{5}, \frac{7}{4}, \frac{9}{7}, \frac{5}{5}, \frac{11}{40}, \frac{7}{12}, \frac{14}{14}, \frac{36}{5},$$

$$2\frac{1}{5}, \quad 6\frac{7}{8}$$

542. Գրեցեք հասարակ կոտորակի ձևով՝

$$8 : 5 = \quad 17 : 4 = \quad 18 : 7 = \quad 28 : 3 =$$



Նկ. 26.

(Յերկու անգամ մեծացրած է):

543. 26-րդ նկարի վրա պատկերված է ուղիղ գծի մի հատ-  
ված: Այդ հատվածը սանտիմետրով չափելիս, սանտիմետրը տե-  
ղավորվում է, յերեք անգամ և միում է հատվածի մի մասը, վո-  
րը փոքր և սանտիմետրից: Մնացած մասի մեջ  $\frac{3}{10}$  ամ-ը  
մտնում է 3 անգամ, այդ մասը հավասար կլինի  $\frac{3}{10}$  ամ-ի: Վողջ  
հատվածը հավասար է 3 ամ  $\frac{3}{10}$  ամ, կամ  $3\frac{3}{10}$  ամ.

$\frac{3}{10}$  թիվը բաղկացած է ամբողջ թիվից (3) և կոտորակից  
( $\frac{3}{10}$ ): Այսպիսի թիվը ( $\frac{3}{10}$ ) կոչվում է խառը թիվ:

Ամբողջ թիվը ու կոտորակից բաղկացած թիվը կոչվում է խա-  
ռը թիվ:

544. Գրեցեք հինգ կանոնավոր կոտորակ, հինգ անկանոն  
կոտորակ և հինգ խառը թիվ:

545. Մետքի քանի քառորդ մաս և պարունակվում  $2\frac{3}{4}$  մ-ի  
մեջ:

1 մ-ը պարունակում է  $\frac{4}{4}$  մ, 2 մ-ը պարունակում է  $\frac{8}{4}$  մ,  
 $2\frac{3}{4}$  մ-ը պարունակում է  $\frac{11}{4}$  մ: Հետեւյալը,  $2\frac{3}{4}$  մ  $= \frac{11}{4}$  մ:

Մենք  $2\frac{3}{4}$  խառը թիվը գարձրինք անկանոն կոտորակ՝  $\frac{11}{4}$ :

$\frac{3}{4}$  խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելու ժամանակ մենք նախ գտանք, թե քանի քառորդ մաս և պարզունակում 2 ամբողջը, և ստացված  $\frac{8}{4}$ -ին ավելացրինք  $\frac{3}{4}$ :

Նույնը կստանանք, յեթե կոտորակի հայտարարը (4) բաղմապատկենք ամբողջ թվով (2) և ստացված արտադրյալին ավելացնենք կոտորակի համարիչը (3), Ստացված գումարը (11) կլինի կոտորակի համարիչը, իսկ հայտարարը մնում է նախկինը (4):

Խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելու նամար, պետք է կոտորակի հայտարարը բազմապատկել ամբողջ թվով յեվ բառացված արտադրյալին ավելացնել կոտորակի համարիչը, այդ կիրանի անկանոն կոտորակի համարիչը. հայտարարը մնում է նախկինը:

Որինակի համար՝

$$3\frac{2}{5} = \frac{5 \times 3 + 2}{5} = \frac{17}{5}$$

546. Հետեյալ խառը թվերը դարձրեք անկանոն կոտորակ:

$$3\frac{2}{7}, 4\frac{1}{5}, 8\frac{3}{5}, 12\frac{1}{2}, 14\frac{3}{8}, 28\frac{1}{6}, 47\frac{2}{3}$$

547. Ունենք 13 կոոր ոճառ, յուրաքանչյուրը  $\frac{1}{4}$  կգ. Բոլոր միասին կշռում են  $\frac{13}{4}$  կգ. Քանի՞ լիվ կիլոգրամ և բացի այդ կիլոգրամի քանի՞ չորրորդ մասն են պարունակում բոլոր կտորները միասին:

Յուրաքանչյուրը չորս կտորը կազմում է 1 կգ, վորովհետեւ  $\frac{4}{4}$  կգ = 1 կգ իսկ  $\frac{13}{4}$  կիլոգրամի մեջ կլինի 3 անգամ  $\frac{4}{4}$  ական կիլոգրամ, և ելի  $\frac{1}{4}$  կգ:

$$\text{Հետեաբար } \frac{13}{4} \text{ կգ} = 3\frac{1}{4} \text{ կգ.}$$

$\frac{13}{4}$  անկանոն կոտորակից մենք անջատեցինք ամբողջ թիվը:

Նույն արդյունքը կստանանք, յեթե  $\frac{13}{4}$  կոտորակի համարիչը բաժանենք նրա հայտարարի վրա (13:4), քանորդը (3) կլինի ամբողջ թիվը, բաժանումից ստացված մնացորդը (1) կլինի համարիչը, իսկ բաժանարարը (4) կլինի հայտարարը:

548. Ունենք 15 ձողիկ, յուրաքանչյուրը  $\frac{1}{5}$  մ. Իուլոր ձու:

Դիկների յերկարությունը միասին հավասար է  $\frac{15}{5}$  մ-ին քանի՞ լիվ մետր կարելի յե կազմել բոլոր ձողիկներից:

1 մ կազմելու համար, պետք է վերցնել 5 ձողիկ, քանի վոր  $\frac{5}{5}$  մ = 1 մ-ին իսկ  $\frac{15}{5}$  մ-ից կարելի յե կազմել 3 մ, վորովհետեւ  $\frac{15}{5}$  մ-ի մեջ պարունակվում է 3 անգամ  $\frac{5}{5}$ -ական մետր, ուրեմն  $\frac{15}{5}$  մ = 3 մ:

$\frac{15}{5}$  անկանոն կոտորակից մենք անջատեցինք ամբողջ մասը:

Նույն պատասխանը կստանանք, յեթե  $\frac{15}{5}$  կոտորակի համարիչը բաժանենք հայտարարի վրա (15:5=3)

Անկանոն կոտորակից ամբողջ թիվն անջատելու նամար, պետք է նամարիչը բաժանել հայտարարի վրա:

$$\frac{9}{4} = 9 : 4 = 2\frac{1}{4}$$

549. Հետեյալ կոտորակներից անջատեցեք ամբողջ թվերը:

$$\frac{28}{3}, \frac{13}{7}, \frac{32}{8}, \frac{15}{11}, \frac{8}{8}, \frac{36}{5}, \frac{18}{6}, \frac{49}{6}, \frac{56}{7}, \frac{38}{13}$$

550. 27 կգ պղնձից պատրաստված է 5 միատեսակ ձու:

վաճք: Ինչի՞ յե հավասար մի չուլվածքի միջին կշռը: Պատասխանն արտահայտեցեք խառը թվով:

551. Լուծեցեք հետեւյալ որինակները և գրեցեք խառը թվերի ձևով.

$$32 : 7 = \quad 205 : 16 = \quad 198 : 37 = \quad 245 : 48 =$$

### ԿՈՏՈՐԱԿԸ ՄԻ ԳԱՆԻ ԱՆԳԱՄ ՄԵՇԱՅՆԵԼԸ

552.  $\frac{4}{9}$ -ը կոտորակը քանի՞ անգամ ե մեծ  $\frac{2}{9}$ -ից:

Յերկու կոտորակներն ել միտեսակ մասերից են կազմված (իններորդական): Յերկու կոտորակների հայտարարներն իրար հավասար են: Առաջին կոտորակի համարիչը 2 անգամ մեծ և յերկրորդ կոտորակի համարչից, ուրեմն, առաջին կոտորակը, յերկու անգամ ավելի իններորդական մաս ունի, քան յերկրորդը: Առաջին կոտորակը յերկու անգամ մեծ և յերկրորդից:

Յերես հավասար հայտարարներ ունեցող յերկու կոտորակներից մեկի համարից մի բանի անգամ մեծ և մյուսի համարից, ապա առաջին կոտորակը նույնան անգամ մեծ և յերկրորդից:

553. Հետեւյալ կոտորակներից յուրաքանչյուրը քանի՞ անգամ ե մեծ  $\frac{3}{7}$ -ից.  $\frac{6}{7}, \frac{12}{7}, \frac{18}{7}, \frac{36}{7}, \frac{48}{7}, \frac{15}{7}, \frac{24}{7}$

554.  $\frac{3}{4}$ -ը քանի՞ անգամ ե մեծ  $\frac{3}{8}$ -ից:

Յերկու կոտորակները հավասար թվով (3) մասեր են պարունակում: Յերկու կոտորակների համարիչները միատեսակ են: Առաջին կոտորակի հայտարարը 2 անգամ փոքր ե յերկրորդ կոտորակի հայտարարից: Ուրեմն, առաջին կոտորակի մասերը 2 անգամ խոչոր են յերկրորդի մասերից: Առաջին կոտորակը 2 անգամ մեծ ե յերկրորդից:

Յերես հավասար համարի ունեցող յերկու կոտորակներից մեկի հայտարարը մի բանի անգամ փոքր է մյուսի հայտարարից, ապա առաջին կոտորակը նույնան անգամ մեծ և յերկրորդից:

555.  $\frac{7}{8}$ -ը քանի՞ անգամ ե մեծ հետեւյալ կոտորակներից յուրաքանչյուրից:

$$\frac{7}{16}, \frac{7}{24}, \frac{7}{32}, \frac{7}{40}$$

556.  $\frac{2}{9}$ -ը մեծացնել 4 անգամ:

$\frac{2}{9}$  կոտորակը 4 անգամ մեծացնել, նշանակում ե գտնել մի այնպիսի կոտորակ, վորի համարիչը 4 անգամ մեծ լինի  $\frac{2}{9}$ -ի համարչից: Դրա համար  $\frac{2}{9}$ -ի համարիչը մեծացնում ենք 4 անգամ: Ստանում ենք  $\frac{8}{9}$  կոտորակը:

557.  $\frac{3}{8}$ -ը մեծացնել 4 անգամ:

$\frac{3}{8}$ -ը 4 անգամ մեծացնել, նշանակում ե գտնել մի այնպիսի կոտորակ, վորի համարարը 4 անգամ փոքր ե  $\frac{3}{8}$ -ի հայտարարից: Դրա համար  $\frac{3}{8}$  կոտորակի հայտարարը 4 անգամ փոքրացնում ենք: Ստանում ենք  $\frac{3}{2}$ :

Կոտորակը մի բանի անգամ մեծացնելու համար, պես ե կամ նույնիան անգամ մեծացնել երա համարիչը, կամ նույնիան անգամ փոքրացնել հայտարարը:

558. Տված են  $\frac{3}{7}, \frac{7}{10}, \frac{11}{25}, \frac{5}{32}$  կոտորակները: Այդ կոտորակներից յուրաքանչյուրը հաջորդաբար մեծացը 2 անգամ, 5 անգամ, 9 անգամ:

559. Ի՞նչ փոփոխություն կլի կոտորակի մեծությունը, յեթե անփոփոխ թողնելով հայտարարը, նբա համարիչը մեծացնենք 5 անգամ, 4 անգամ, 8 անգամ:

560.  $\frac{2}{3}$ -ը քանի՞ անդամ ե մեծ, քան?

$$\frac{2}{9}, \frac{2}{15}, \frac{2}{21}, \frac{2}{27}$$

561.  $\frac{3}{4}$ -ը քանի՞ անդամ ե մեծ քան?

$$\frac{3}{8}, \frac{3}{16}, \frac{3}{28}, \frac{3}{12}, \frac{3}{32}$$

562. Հետևյալ կոտորակներից յուրաքանչյուրը 5 անդամ մեծացրեք.

$$\frac{3}{5}, \frac{7}{10}, \frac{8}{15}, \frac{3}{20}, \frac{6}{25}, \frac{7}{30}, \frac{9}{35}, \frac{11}{40}, \frac{8}{45}, \frac{17}{50}$$

563. Ի՞նչ փոփոխությունն կկրի կոտորակը, եթե նրա հայտարարը փոքրացնենք 6 անդամ, 4 անդամ, 9 անդամ։

### ԿՈՏՈՐԱԿԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ՓՈքՐԱՑՆԵԼԸ

564.  $\frac{3}{7}$ -ը քանի՞ անդամ ե փոքր  $\frac{6}{7}$ -ից։

Յերկու կոտորակները միատեսակ մասերից (յոթերորդական) են կազմված։ Յերկու կոտորակների հայտարարներն երար հավասար են։ Առաջին կոտորակի համարիչը 2 անդամ փոքր ե յերկրորդի համարիչից, ուրեմն, առաջին կոտորակի մեջ 2 անդամ քիչ յոթերորդական մաս կա, քան յերկրորդի մեջ։ Առաջին կոտորակը 2 անդամ փոքր ե յերկրորդից։

Յերեք հավասար հայտարար ունեցող կոտորակներից մեկի համարիչը մի բանի անգամ փոքր ե մյուսի համարչից, ապա առաջին կոտորակը նույնիան անգամ փոքր ե յերկրորդից։

565. Հետևյալ կոտորակներից յուրաքանչյուրը քանի՞ անդամ ե փոքր  $\frac{24}{11}$ -ից։

$$\frac{2}{11}, \frac{3}{11}, \frac{6}{11}, \frac{8}{11}, \frac{12}{11}$$

566.  $\frac{3}{10}$  կոտորակը քանի՞ անդամ ե փոքր  $\frac{3}{5}$ -ից։

Յերկու կոտորակները հավասար թվով մասեր են պարունակում (3 մաս)։ Յերկու կոտորակների համարիչները միատեսակ են։ Առաջին կոտորակի հայտարարը 2 անդամ մեծ ե յերկրորդի հայտարարից, ուրեմն, առաջին կոտորակի մասերը յերկու անդամ մանր են, քան յերկրորդի մասերը։ Առաջին կոտորակը յերկու անդամ փոքր ե յերկրորդից։

Յերեք հավասար համարիչ ունեցող յերկու կոտորակներից մեկի հայտարարը մի բանի անգամ մեծ ե մյուսի հայտարարից, ապա առաջին կոտորակը նույնիան անգամ փոքր ե յերկրորդից։

567.  $\frac{7}{40}$ -ը քանի՞ անդամ ե փոքր հետևյալ կոտորակներից յուրաքանչյուրից։

$$\frac{7}{8}, \frac{7}{20}, \frac{7}{10}, \frac{7}{5}, \frac{7}{4}, \frac{7}{2}$$

568.  $\frac{8}{9}$ -ը փոքրացնել 2 անդամ։

$\frac{8}{9}$  կոտորակը յերկու անդամ փոքրացնել՝ նշանակում ե գտնել մի այնպիսի կոտորակ, վորի համարիչը 2 անդամ փոքր ե  $\frac{8}{9}$ -ի համարչից։ Դրա համար  $\frac{8}{9}$ -ի համարիչը փոքրացնում ենք 2 անդամ։ Ստանում ենք  $\frac{4}{9}$ ։

569.  $\frac{2}{7}$  փոքրացնել 3 անդամ։

$\frac{2}{7}$ -ը 3 անդամ փոքրացնել, նշանակում ե գտնել մի այնպիսի կոտորակ, վորի հայտարարը 3 անդամ մեծ ե  $\frac{2}{7}$ -ի հայտարարից։ Դրա համար  $\frac{2}{7}$  կոտորակի հայտարարը 3 անդամ մեծացնում ենք։ Ստանում ենք  $\frac{2}{21}$  կոտորակը։

Կոտորակը մի բանի անգամ փոքրացնելու համար, պես ե նույնիան անգամ փոքրացնել համարիչը, կամ մեծացնել հայտարարը։

570. Տված են  $\frac{6}{13}, \frac{8}{13}, \frac{10}{13}, \frac{12}{13}$  կոտորակները Այս կոտորակներից յուրաքանչյուրը փոքրացրեք 2 անգամ:

571. Ի՞նչ փոփոխության կենթարկվի կոտորակի մեծությունը, յեթե նրա համարիչը փոքրացնենք 2 անգամ, 7 անգամ, 10 անգամ:

572. Հետեւյալ կոտորակներից յուրաքանչյուրը քանի անգամ ե փոքր  $\frac{3}{5}$  ից.

$$\frac{3}{20}, \frac{3}{10}, \frac{3}{35}, \frac{3}{55}, \frac{3}{125}$$

573.  $\frac{5}{8}, \frac{11}{12}, \frac{14}{15}$  կոտորակներից յուրաքանչյուրը հաջորդաբար փոքրացրեք 3 անգամ, 5 անգամ, 7 անգամ:

574. Ի՞նչ փոփոխության կենթարկվի կոտորակի մեծությունը, յեթե նրա հայտարարը մեծացնենք 5 անգամ, 4 անգամ, 12 անգամ:

575. Ունենք հավասար հայտարարներ, բայց տարբեր համարիչներ ունեցող յերկու կոտորակ: Այդ կոտորակներից վերն ե մեծ:

576. Ունենք հավասար համարիչներ, բայց տարբեր հայտարարներ ունեցող յերկու կոտորակ: Այդ կոտորակներից վերն ե փոքր:

### ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՄԱՆՐԱՑՆԵԼՆ ՈՒ ԿՐՁԱՑԵԼԸ

577. Տված ե  $\frac{3}{4}$  կոտորակը: Կփոփոխվի՞ արդյոք այդ կոտորակի մեծությունը, յեթե նրա համարիչն ու հայտարարը յերկու անգամ մեծացնենք:

Այդ կոտորակի համարիչն ու հայտարարը 2 անգամ մեծացնելուց հետո կստանանք  $\frac{6}{8}$  կոտորակը: Այդ կոտորակի համարիչը 2 անգամ մեծացնելով, մենք կոտորակը 2 անգամ մեծացրինք, այնուհետև այդ կոտորակի հայտարարը 2 անգամ փոքրացնելով, մենք կոտորակը յերկու անգամ փոքրացրինք:

Յեթե վորեւ թիվ մի քանի անգամ մեծացնում ենք և հետո նույնքան անգամ փոքրացնում, ապա այդ թիվ մեծությունը չի փոխվի:  $\frac{3}{4}$  կոտորակը հավասար ե  $\frac{6}{8}$  կոտորակն:

Կոտորակի համարիչն ու հայտարարը միևնույն թվով բաղմապատկելով, մենք կոտորակն արտահայտում ենք ավելի մասրով (մանրացնում ենք կոտորակը): Այդ գեղքում կոտորակի մեծությունը չի փոխվում:

578. Կփոփոխվի՞ արդյոք  $\frac{2}{3}$  կոտորակի մեծությունը, յեթե նրա համարիչն ու հայտարարը մեծացնենք 5 անգամ, 8 անգամ, 10 անգամ:

579.  $\frac{3}{8}$  կոտորակը փոխարինեցեք մեծությամբ նրան հավասար այլ կոտորակներով, վորոնց հայտարարները լինեն՝ 16, 24, 32, 48:

580.  $\frac{2}{5}$  կոտորակը փոխարինեցեք մեծությամբ նրան հավասար այն կոտորակներով, վորոնց հայտարարներն են՝ 10, 15, 20, 25:

581. Ստուգեցեք հետեւյալ կոտորակներն իրար հավասար են, թե վո՞չ:

$$\frac{\frac{3}{4}}{\frac{24}{32}}, \frac{\frac{6}{8}}{\frac{33}{44}}, \frac{\frac{9}{12}}{\frac{45}{60}}, \frac{\frac{12}{16}}{\frac{15}{20}}, \frac{\frac{15}{20}}{\frac{18}{24}}, \frac{\frac{18}{24}}{\frac{21}{28}}, \frac{\frac{21}{28}}{\frac{30}{40}}, \frac{\frac{30}{40}}{\frac{27}{36}}$$

582. Տված ե  $\frac{4}{8}$  կոտորակը: Կփոփոխվի՞ արդյոք այդ կոտորակի մեծությունը, յեթե նրա համարիչն ու հայտարարը փոքրացնենք 4 անգամ:

Այդ կոտորակի համարիչն ու հայտարարը 4 անգամ փոքրացնելուց հետո կստանանք  $\frac{1}{2}$ : Կոտորակի համարիչը 4 անգամ փոքրացնելով, մենք այդ կոտորակը փոքրացնում ենք 4 անգամ: Այնուհետև կոտորակի հայտարարը 4 անգամ փոքրացնելով, մենք այդ կոտորակը մեծացնում ենք 4 անգամ:

Յեթե մենք թիվը փոքրացնում ենք մի քանի անգամ և

ապա մեծացնում նույնքան անդամ, զրանից թվի մեծությունը  
չի փոխվում.  $\frac{4}{8}$  կոտորակը հավասար է  $\frac{1}{2}$ -ին:

Յելք մենք կոտորակի համարիչն ու հայտարարը բաժանում ենք միևնույն թվի վրա, ապա մենք այդ կոտորակն արտահայտում ենք ավելի խոշոր մասերով (Կրնատում ենք այդ կոտորակը): Կոտորակի մեծությունը զրանից չի փոխվում:

583.  $\frac{16}{24}$  կոտորակի մեծությունը կփոխվի, յեթե նրա համարիչն ու հայտարարը բաժանենք 2-ի, 4-ի և 8-ի վրա.

Կօտարակը կրնատելու համար, պես ե նրա համարիչն ու հայտարը բաժանել միենինույն բարի վրա.

Որինակի համար՝

$$\frac{8}{12} = \frac{8^2}{12^2} = \frac{2}{3}$$

| Կրնատումից կօտարակի մեծությունը չի փոփխվում:

584. Կրճատեցեք հետևյալ կոտորակները.

$$\frac{3}{18}, \frac{4}{16}, \frac{6}{18}, \frac{8}{24}, \frac{7}{21}, \frac{4}{6}, \frac{8}{12}, \frac{9}{15}, \frac{12}{20}$$

585. Կրճատեցեք հետևյալ կոտորակները.

$$\frac{6}{36}, \frac{4}{24}, \frac{5}{35}, \frac{7}{49}, \frac{14}{35}, \frac{15}{40}, \frac{35}{50}, \frac{24}{50}, \frac{18}{20}$$

586. Հարցական նշանների տեղը դրեք անհրաժեշտ թվերը:

$$\frac{15}{25} = \frac{3}{?}, \quad \frac{16}{?} = \frac{4}{11}, \quad \frac{?}{15} = \frac{40}{75}, \quad \frac{121}{165} = \frac{11}{?}, \quad \frac{9}{20} = \frac{?}{100}$$

### ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՆՈՒՄԸ

587. Բանվորը նախ գնեց  $\frac{9}{10}$  կգ ծխախոտ, իսկ հետո  $\frac{3}{10}$  կգ։ Ինչքո՞մն ծխախոտ և գնված, Առաջին անգամ ինչքանմա՞վ ե ավել գնված, քան յերկրորդ անգամ։

$$\frac{9}{10} + \frac{3}{10} = \frac{9+3}{10} = \frac{12}{10} = 1\frac{2}{10} \text{ կգ}$$

$$\frac{9}{10} - \frac{3}{10} = \frac{9-3}{10} = \frac{6}{10} \text{ կգ}$$

Հավասար հայտարարներ ունեցող կօտարակները զումարելու կամ հանելու համար, պես ե գումարել կամ հանել այդ կոտորակների համարիշները. սացված արդյունքը կլինի համարիչը, իսկ հայտարարը պես ե բողնել անփոփոխ։

Որինակի համար՝

$$\frac{4}{7} + \frac{2}{7} = \frac{6}{7}, \quad \frac{7}{9} - \frac{5}{9} = \frac{2}{9}$$

588. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\frac{1}{4} + \frac{2}{4} = \frac{2}{5} + \frac{1}{5} = \frac{1}{6} + \frac{5}{6} = \frac{3}{8} + \frac{5}{8} + \frac{1}{8} =$$

$$\frac{1}{9} + \frac{2}{9} + \frac{4}{9} = \frac{7}{15} + \frac{2}{15} + \frac{14}{15} + \frac{1}{15} =$$

589. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\frac{7}{9} - \frac{2}{9} = \frac{5}{8} - \frac{3}{8} = \frac{13}{15} - \frac{4}{15} = \frac{8}{4} - \frac{1}{4} =$$

$$\frac{19}{25} - \frac{14}{25} = \frac{11}{16} - \frac{5}{16} = \frac{5}{7} - \frac{3}{7} = \frac{11}{18} - \frac{7}{18} =$$

590. Պետք է գումարել հետևյալ կոտորակները.

$$\frac{3}{8} + \frac{1}{2} + \frac{3}{4}$$

Այս կոտորակները գումարել չի կարելի, վարովիետենրանք արտահայտված են տարբեր մասերով (նրանք տարբեր հայտարարներ ունեն): Գումարել կարելի յեթ միան հավասար հայտարարներ ունեցող կոտորակները:  $\frac{3}{8}, \frac{1}{2}$  և  $\frac{3}{4}$  կոտորակներն ար-

տարհայտենք միատեսակ մասերով, այսինքն նրանց բնդիանուր հայտարարը բերենք:

Մի հանի կոսօրակների բնդիանուր հայտարար կոչվում է այն բիբր, վորև առաջ մնացարդի բաժանվում է այդ կոսօրակների բայց նայտարարների վրա:

Գումարման համար արված կոտորակների հայտարարները հետեւյաներն են՝ 8, 2 և 4։ Սուաջին հայտարարն (8) առանց մնացորդի բաժանվում է մնացած բոլոր հայտարարների (2 և 4) վրա 8 հայտարարն ընդհանուր հայտարար կլինի  $\frac{3}{8}$ ,  $\frac{1}{2}$  և  $\frac{3}{4}$  կոտորակների համար։

$\frac{1}{2}$  և  $\frac{3}{4}$  կոտորակներն արտահայտենք ութերորդական մասերով։ Դրա համար այդ կոտորակներից լուրաքանչյուրի համարիչն ու հայտարարը մեծացնենք այնքան անգամ, վորքան անգամ 8-ը մեծ և յուրաքանչյուր կոտորակի հայտարարից։  $\frac{1}{2}$ -ի համարիչն ու հայտարարը պետք է մեծացնել 4 անգամ։

Կստանանք  $\frac{4}{8}$ , իսկ  $\frac{3}{4}$ -ի համարիչն ու հայտարարը պետք է մեծացնել 2 անգամ։ Կստանանք  $\frac{6}{8}$ , (կոտորակի համարիչն ու հայտարարը միենույն թվով բազմապատկեցնեք, վորպեսզի կոտորակի մեծությունը չփոփոխվի):

Գումարենք ստացված կոտորակները.

$$\frac{3}{8} + \frac{4}{8} + \frac{6}{8} = \frac{13}{8}$$

Խնդրի վող լուծումը գրվում է այսպես՝

$$\frac{3}{8} + \frac{1}{2} + \frac{3}{4} = \frac{3}{8} + \frac{4}{8} + \frac{6}{8} = \frac{13}{8} = 1\frac{5}{8}$$

591. Պետք ե  $\frac{19}{20}$ -ից հանել  $\frac{3}{5}$ ։

Այս կոտորակները հանել չի կարելի, վորովհետեւ նրանք տարբեր մասերով են արտահայտված (նրանք տարբեր հայտա-

րարներ ունեն): Կարելի յեւ հանել միայն հավասար հայտարարներ ունեցող կոտորակները։  $\frac{19}{20}$  և  $\frac{3}{5}$  կոտորակներն արտահայտենք միատեսակ մասերով, այսինքն այդ կոտորակներն ընդհանուր հալտարարի բերենք։ Առաջին կոտորակի հայտարարը (20) անմնացորդ բաժանվում է յերկրորդ կոտորակի հայտարարի (5) վրա։ 20-ը կլինի ավյալ կոտորակների ընդհանուր հայտարարը։

$\frac{3}{5}$  կոտորակն արտահայտենք քսաներորդական մասերով։ Դրա համար այդ կոտորակի համարիչն ու հայտարարը մեծացնենք 4 անգամ, վորովհետեւ 20-ը 4 անգամ մեծ ե  $\frac{3}{5}$ -ի հայտարարից։ Կստանանք  $\frac{12}{20}$

Լուծման գրությունը՝

$$\frac{19}{20} - \frac{3}{5} = \frac{19}{20} - \frac{12}{20} = \frac{7}{20}$$

Յերեւ անհրաժեշտ է գտնել տարբեր հայտարար ունեցող կոտորակների գումարը կամ տարբերությունը, ազա նախ պես ե այդ կոտորակներն բնդիանուր հայտարարի բերելու, այնունետեւ կատարել գործողություններն այնպես, ինչպես ցույց է տրված վերը։

592. Լուծեցնեք հետեւյալ որինակները.

$$\begin{aligned} \frac{5}{16} + \frac{3}{4} + \frac{5}{8} &= \frac{11}{20} + \frac{7}{10} + \frac{3}{5} = \frac{7}{15} + \frac{3}{5} + \frac{2}{3} = \\ \frac{17}{24} + \frac{7}{12} + \frac{3}{8} + \frac{5}{6} &= \frac{23}{40} + \frac{5}{8} + \frac{13}{20} + \frac{3}{4} = \end{aligned}$$

593. Առաջին որը պահեստից բաց թողեցին  $2\frac{1}{2}$  ս շաքար, յերկրորդ որը՝  $3\frac{3}{4}$  ս, իսկ յերրորդ որը՝  $1\frac{7}{8}$  ս, թանիք տանն շաքար բաց թողեցին։

$$2\frac{1}{2} + 3\frac{3}{4} + 1\frac{7}{8} = 2\frac{4}{8} + 3\frac{6}{8} + 1\frac{7}{8} = 6\frac{17}{8} = 8\frac{1}{8} (\text{ս})$$

Խնդրի լուծումն արտագրեցեք տեսրում:

594.  $4\frac{23}{30} - 1\frac{7}{10}$

$$4\frac{23}{30} - 1\frac{7}{10} = 4\frac{23}{30} - 1\frac{21}{30} = 3\frac{2}{30} = 3\frac{1}{15}$$

Լուծումն արտագրեցեք տեսրում:

Խառը թվերի զումարման ու հանման ժամանակ նախ գտնում են ամբողջ թվերի զումարը կամ տարբերությունը, իսկ հետո կատարած ներփակումը.

595. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$2\frac{7}{36} + 1\frac{5}{9} + 3\frac{7}{12} =$$

$$3\frac{7}{45} + 1\frac{8}{15} + 3\frac{7}{9} =$$

$$3\frac{7}{20} + 1\frac{17}{30} + 2\frac{13}{60} =$$

$$5\frac{6}{7} + 4\frac{4}{21} + 6\frac{5}{42} =$$

596. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$1 - \frac{3}{4} =$$

$$2 - \frac{4}{5} =$$

$$4 - \frac{7}{12} =$$

$$5 - 2\frac{1}{6} =$$

$$8 - 7\frac{9}{14} =$$

$$12 - 11\frac{5}{17} =$$

597. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\frac{17}{20} - \frac{3}{5} =$$

$$\frac{19}{25} - \frac{3}{5} =$$

$$\frac{13}{30} - \frac{2}{5} =$$

598. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$3\frac{28}{75} - 1\frac{7}{25} =$$

$$4\frac{23}{80} - 1\frac{3}{16} =$$

$$5\frac{47}{90} - 1\frac{11}{30} =$$

599. Բրիգան առաջին որը կատարեց պատվերի  $\frac{5}{16}$  մասը,

յերկրորդ որը՝  $\frac{7}{16}$  մասը: Յերկու որվա ընթացքում բրիգագը պատվերի վճր մասը կատարեց:

600. Պահպատից մի խանութին բաց թողեցին  $1\frac{3}{4}$  ս շաքար,

իսկ մյուսին՝  $\frac{3}{8}$  ս ավելի: Ընդամենը քանի՞ տոնն շաքար բաց թողեցին այլք յերկու խանութին:

601. Խանութը վաճառեց  $12\frac{3}{5}$  կգ թեր: Ինչքան թեր մասց խանութում, յեթե ընդամենը 25 կգ թեր կար:

602. Առաջին ժամում գնացքն անցավ ամբողջ ճանապարհի  $\frac{1}{4}$  մասը, յերկրորդ ժամում՝ ամբողջ ճանապարհի  $\frac{3}{8}$  մասը, իսկ յերրորդ ժամում՝ ամբողջ ճանապարհի  $\frac{5}{16}$  մասը: Ճանապարհի վճր մասն ե մնացել անցնելու:

603. Բրիգագը յերկու որվա ընթացքում պետք ե կատարել յանքի ամբողջ պլանի  $\frac{1}{2}$ -ը: Առաջին որը բրիգագը կատարեց յանքի  $\frac{1}{4}$ -ը, իսկ յերկրորդ որը՝  $\frac{3}{8}$ -ը: Ամբողջ յանքի վճր մասի չափով ե բրիգագը գերակատարել իր պլանը:

604. Մետաղալարի յերկարությունը  $15\frac{1}{2}$  մ է: Նրանից առաջին անգամ կտրեցին  $2\frac{1}{4}$  մ, յերկրորդ անգամ՝  $3\frac{1}{8}$  մ, քանի մետր մետաղալար մնաց:

605. Գնացքը կայարանից մեկնեց  $2\frac{1}{4}$  ժամին: Ամբողջ ճանապարհը նա անցավ  $8\frac{5}{12}$  ժամում: Ժամը քանի՞ որին նա ճանապարհին կայարանը:

606. Շոգհնավը նավահանգստից մեկնեց  $1\frac{2}{3}$  ժամին և նշանակման տեղը հասավ  $11\frac{5}{6}$  ժամին: Քանի՞ ժամում նա անցավ ճանապարհը:

## ԱՄԲՈՂՋԻ ՄԱՍԸ ԳՏՆԵԼԸ

607. Բանվորն ուներ 50 ռ. Նա այդ դրամի  $\frac{1}{5}$  մասը տվեց բլուղին։ Ինչքան վճարեց բլուղին։

50-ի  $\frac{1}{5}$  մասը գտնելու համար, պետք է 50-ը բաժանել 5-ի

կրառ

$$50 : 5 = 10 \text{ (ռ.)}$$

Բլուղին վճարվել է 10 ռ.։

608. Բանվորն ուներ 90 ռ. Կոշիկ դնելու համար նա ծախսեց այդ դրամի  $\frac{2}{5}$  մասը։ Նա ինչքան վճարեց կոշիկներին։

Ինդիրը լուծելու համար պետք է գտնել  $90 \cdot \frac{2}{5}$  մասը։

Նախ գտնենք  $90 \cdot \frac{1}{5}$  մասը։ Դրա համար 90-ը բաժանենք 5-ի կրառ։

$$90 : 5 = 18$$

$90 \cdot \frac{1}{5}$  մասը կազմում է 18 ռ.։

$90 \cdot \frac{2}{5}$  մասը կազմում է  $18 \times 2 = 36$  (ռ.)

Կոշիկներին վճարել է 36 ռ.։

$90 \cdot \frac{2}{5}$  մասը գտնելիս մենք 90-ը բաժանեցինք կոտորակի հայտարարի (5) վրա և ստացված քանորդը բաղմապատկեցինք կոտորակի համարչով (2)։

Թվի հասարակ կոտորակի արտահայտված մասը գտնելու համար պետք է թիվը բաժանել այդ կոտորակի հայտարարի վրա յել ստացված հանորդը բազմապատճել նրա համարչով։

Արինակի համար՝ գտնել  $56 \cdot \frac{3}{8}$  մասը։

Լուծում. 1)  $56 : 8 = 7$ , 2)  $7 \times 3 = 21$ ։

609. Գտեք 48 ռ., 36 ռ., 80 ռ., 28 կմ-ի, 56 մ-ի, 72 դմ-ի, 104 հա-ի, 252 լ-ի, 516 սմ  $\frac{1}{4}$  մասը։

610. Գտեք  $48 \cdot \frac{1}{6}$  մասը;  $30 \cdot \frac{1}{5}$  մասը;  $56 \cdot \frac{1}{7}$  մասը;

$72 \cdot \frac{1}{8}$  մասը;  $50 \cdot \frac{1}{10}$  մասը;  $84 \cdot \frac{1}{12}$  մասը;  $100 \cdot \frac{1}{20}$  մասը։

611. Գտեք  $8 \cdot \frac{3}{4}$  մասը;  $25 \cdot \frac{4}{5}$  մասը;  $24 \cdot \frac{7}{8}$  մասը;

$60 \cdot \frac{3}{10}$  մասը;  $144 \cdot \frac{5}{12}$  մասը;  $60 \cdot \frac{8}{15}$  մասը;  $64 \cdot \frac{9}{16}$  մասը;  $120 \cdot \frac{11}{20}$  մասը;  $150 \cdot \frac{3}{25}$  մասը։

612. Քանի՞ բողոք յե պարունակում  $\frac{3}{4}$  ժամը,  $\frac{2}{5}$  ժամը,  $\frac{5}{6}$  ժամը։

613. Քանի՞ սանտիմետր և պարունակում  $\frac{3}{5}$  մ-ը,  $\frac{3}{4}$  մ-ը,  $\frac{1}{2}$  մ-ը։

614. Դպրոցում կար 230 աշակերտ։ Աշակերտության թվի  $\frac{3}{5}$  մասը աղջիկներն են կազմում։ Քանի՞ տղա կա դպրոցում։

615. Գործարանում 963 բանվոր կա։ Նրանցից  $\frac{5}{9}$ -ը կազմում են անկուսակցականները։ Գործարանում քանի՞ կուսակցական կար։

616. Կոլտնտեսությունն ունի 800 հա հողամաս։ Դրա  $\frac{1}{5}$  մասն անտառն է զբաղեցնում,  $\frac{3}{4}$  մասը վարելահող է, իսկ մնացածը մարգագետին է։ Մարգագետինն ինչքան հող է զբաղեցնում։

617. Գնացքը բաղկացած է 96 վագոնից։ Այդ վագոնների

$\frac{7}{12}$  մասը բեռնված է աղլուսով,  $\frac{3}{8}$  մասը՝ ցեմենտով, իսկ մնացածը՝ ապակով։ Քանի վագոն է բեռնված ապակով։

618. Գրքեր, տետրեր ու զիտողական պիտույքներ գնելու համար դպրոցն ստացավ 864 առլիլի, զբար  $\frac{11}{18}$  մասով գիրք գըշնեցին, մնացորդի  $\frac{5}{12}$  մասով տետր գնեցին, իսկ մնացածով զիտողական պիտույքներ գնեցին։ Ի՞նչ արժեցին զիտողական պիտույքները։

619. Կոլանտեսությունում ցանված է 624 հա։ Ցանված տառածության  $\frac{7}{12}$  մասը ցորենն է կաղմում, մնացած տարածության  $\frac{8}{13}$  մասը կաղմում է համար, իսկ մնացածը վուշ է։ Քանի հեկտար վուշ է ցանված։

## ՏՎԱՌ ՄԱՍՈՎ ԱՄԲՈՂՋԸ ԳՏՆԵԼԸ

620. Գործարանում աշխատում են 96 կին, վորը կազմում է բանվորների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասը։ Գործարանում ընդամենը քանի բանվոր կար։

Ամբողջ թիվը 7 անգամ մեծ է իր  $\frac{1}{7}$ -մասից։

Յեթև 96 կինը կազմում է բանվորների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասը, ապա բանվորների ընդհանուր թիվը կանանց թվից 7 անգամ մեծ կլինի։ (Այսինքն 96-ից 7 անգամ մեծ)։

Գործարանի բանվորների ընդհանուր թիվը գտնելու համար պետք է 96-ը բազմապատկել 7-ով։

Գործարանի բանվորների ընդհանուր թիվը հավասար է՝  $96 \times 7 = 672$ ։

621. Գործարանում 312 կին կա, վորը կազմում է գործա-

րանի բանվորների ընդհանուր թվի  $\frac{3}{7}$  մասը։ Հնդամենը քանի բանվոր կա գործարանում։

Բանվորների ընդհանուր թիվը կազմում է  $\frac{7}{7}$  մաս։

Նախ իմանանք, թե ինչի յե հավասար գործարանի բանվորների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասը.  $\frac{1}{7} \times \frac{3}{7} = \frac{3}{49}$  3 անգամ փոքր է։

Քանի վոր 312 կինը կազմում է բանվորների ընդհանուր թվի  $\frac{3}{7}$  մասը, ապա բանվորների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասը 3 անգամ փոքր է 312-ից։ Ուստի, բանվորների ընդհանուր թվի  $\frac{1}{7}$  մասը գտնելու համար, 312-ը պետք է բաժանել 3-ի վրա։  $\frac{1}{7}$  մասը կազմում է  $312 : 3 = 104$ ։

Բանվորների ընդհանուր թիվը 7 անգամ մեծ է իր  $\frac{1}{7}$  մասից։ Հնդհանուր թիվը ստանալու համար 104-ը բազմապատճեն ենք 7-ով։

Գործարանի բանվորների ընդհանուր թիվը կլինի՝  $104 \times 7 = 728$ ։

Վորպեսզի գանենք այն թիվը, վորի  $\frac{3}{7}$  մասը կազմում է 312, մենք 312-ը բաժանեցինք կոտորակի համարչի վրա (3) և ստացված քանորդը բազմապատճեցինք կոտորակի հայտարարով (7)։

Վորպեսզի գտնենք թիվը, լիբե հայենի լի նրա հասարակ կոտորակով արտահայտված մասը, պետք է սված մասը բաժնել այդ կոտորակի համարչի վրա յեկ ստացված հանորդը բազմապատճեն նրա հայտարարով։

Որինակի համար, գտնել այն թիվը, վորի  $\frac{2}{3}$  մասը հավասար է 6-ի։  
Լուծում. 1)  $6 : 2 = 3$ , 2)  $3 \times 3 = 9$ ։

622. Գտեք այն թիվը, վորի  $\frac{1}{4}$  մասը հավասար է 8-ի;  $\frac{1}{5}$  մասը հավասար է 7-ի;  $\frac{1}{8}$  մասը հավասար է 2-ի;  $\frac{1}{9}$  մասը հավասար է 5-ի:

623. Գտեք այն թիվը, վորի  $\frac{3}{4}$  մասը կազմում է 9;  $\frac{5}{8}$  մասը կազմում է 10;  $\frac{4}{7}$  մասը կազմում է 12;  $\frac{6}{11}$  մասը կազմում է 15;  $\frac{8}{9}$  մասը կազմում է 48:

624. Ինչի՞ յե հավասար թիվը, յեթե 8-ը կազմում է նրա  $\frac{2}{5}$  մասը; 7-ը կազմում է նրա  $\frac{7}{12}$  մասը; 15-ը կազմում է նրա  $\frac{5}{9}$  մասը; 28-ը կազմում է նրա  $\frac{14}{15}$  մասը:

625. Կոլանտեսությունը 370 հա ցորեն ցանեց, վորը կազմում է կոլանտեսության ցանքի ամբողջ տարածության  $\frac{5}{8}$  մասը: Գտեք կոլանտեսության ցանքի տարածությունը:

626. Բանվորը կոստյումին վճարեց 50 ռ., վորը կազմում է նրա կիսամյա աշխատավարձի  $\frac{2}{5}$  մասը: Ինչքան է բանվորի աշխատավարձը:

627. Դնացքն անցավ 165 կմ, վորը կազմում է նրա ամբողջ ճանապարհի  $\frac{3}{7}$  մասը: Քանի՞ կիլոմետր է մնացել զեռանցնելու:

628. Խանութը վաճառեց 540 զ կարտոֆիլ, վորը կազմում է ամբողջ պաշարի  $\frac{9}{11}$  մասը: Ինչքան կարտոֆիլ մնաց:

629. Շաքարը ճակնդեղի կշռի  $\frac{3}{20}$  մասն է կազմում: Ի՞նչքան ճակնդեղ է պետք, վոր 125 զ շաքար ստացվի:

630. Միուր խաշելու ժամանակ կորցնում է իր կշռի մոտ  $\frac{2}{5}$  մասը: Ինչքան հում միս է պետք, վոր ստացվի 600 զ խաշած միս:

631. Յերկաթը ձուլելիս կորչում է հանքի կշռի  $\frac{31}{40}$  մասը:

632. Քիշի պատրաստելիս կորչում է խաղողի կշռի  $\frac{17}{25}$

մասը: Ինչքան խաղող պետք է վեցցնել, վոր ստացվի 192 կգ քիշից:

### ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Տասնօրդական կօսօրակ կոչվում է այն կօսօրակը, վարի նայարան է 10, 100, 1000 յեվ այն:

$\frac{5}{10}; \frac{12}{100}; \frac{287}{1000}$  — տասնորդական կոտորակներ են:

$\frac{7}{20}; \frac{12}{500}; \frac{57}{110}$  — հասարակ կոտորակներ են:

Տասնորդական կոտորակները կարելի յե գրել առանց հայտարարի:

Մենք գիտենք, որ թվի մեջ՝ յուրաքանչյուր թվանշանի արժեքը կախում ունի այն տեղից, վորը նա գրավում ե: Այսպես 555 թվի մեջ այն 5 թվանշանը, վորը գտնվում է աջից յերրորդ տեղում, նշանակում է 5 հարյուրավոր, այն 5 թվանշանը, վորը գտնվում է 5 հարյուրավորից դեպի աջ, նշանակում է 5 տասնամյա կողմից, իսկ այն 5 թվանշանը, վորը աջ կողմից առաջին տեղն է գրավում, նշանակում է 5 միավոր. օ տասնավորը 5 հարյուրավորից 10 անգամ փոքր ե: 5 միավորը 5 տասնամյավորից 10 անգամ փոքր ե: Թվանշանի արժեքը 10 անգամ փոքր է նրա ձախ կողքին գտնվող թվանշանի արժեքից: Յեթե 555 թվի կողքին 5 միավորից հետո աջ կողմից գրենք 5 թվանշանը, ապա նրա արժեքը պետք է 10 անգամ փոքր լինի 5 միավորից: Յեթե միավորը փոքրացնենք 10 անգամ, ապա ստացվում է տասնորդական մասեր: Հիտեաբար, այն 5 թվանշանը, վորը գտնվում է 5 միավորի աջ կողքին, կնշանակի 5 տասնորդական: Պայմանավորվել են ամբողջ թիվը տասնորդական մասից անջատել ստորակետով: Այսպիսով 555 ամբողջ 5 տասնորդականը կարելի

յե գրել այսպես՝ 555,5 (կարդում են՝ 555 ամբողջ 5 տասնորդաշին):

Տասերորդական մասերը գտնվում են ստորակետից դեպի աջ, առաջին տեղում:

Յեթե ամբողջներ չկան, արդա ստորակետից դեպի ձախ գրում են զերո: Որինակ՝ 5 տասնորդականը գրում են այսպես՝ 0,5 (կարդում են՝ զերո ամբողջ 5 տասնորդական):

633. Կարդացեք հետևյալ թվերը՝ 10,5 մ; 6,8 ս; 26,2 կմ; 45,7 ս; 3,4; 7,8; 4,6 դկլ; 0,8; 0,3 ոուբ.; 0,9; 40,2; 800,7:

634. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ զերո ամբողջ յերեք տասերորդական ոուբլի: յո՞ւ ամբողջ մեկ տասերորդական ցենտներ. քսան ամբողջ ութ տասերորդական գրամ՝ զերո ամբողջ իննը տասերորդական:

Յեթե 555,5-ին աջից ելի՛ կցագրենք 5 թվանշանը, ապա այդ թվանշանի արժեքը 10 անգամ փոքր կլինի 5 տասերորդականից, կամ 100 անգամ փոքր կլինի 5 միավորից: Այն 5 թվանշանը, վորը գտնվում է ստորակետից հետո դեպի աջ, յերկրորդ տեղում, կոչվում է 5 հարյուրերորդական: 555,55 թիվը կազմված է 555 ամբողջ միավորից, միավորի 5 տասերորդական մասերից և միավորի 5 հարյուրերորդական մասից: 5 տասերորդական մասը պարունակում է 50 հարյուրերորդական մաս, այդ պատճառով 5 տասերորդական և 5 հարյուրերորդական ասելու փոխարեն ասում են 55 հարյուրերորդական: 555,55 թիվը կարդում են՝ 555 ամբողջ 55 հարյուրերորդական:

Հարյուրերորդական մասերը գտնվում են ստորակետից դեպի աջ յերկրորդ տեղում:

8,03 ոուբին՝ կարդում են այսպես՝ 8 ամբողջ յերեք հարյուրերորդական ոուբլ. Այստեղ տասերորդական մասերի տեղ գտնվում է զերո, քանի վոր թվի. մեջ տասերորդական մասեր չկան:

635. Կարդացեք հետևյալ թվերը՝ 0,29 կգ; 80,23 գ; 24,96 լ; 0,65 գ; 2,08 սմ; 0,03 կմ; 15,07 ոուբ.; 0,7 ս; 20,04 մ; 80,3 դմ; 0,05 մմ:

636. Գրեցեք հետևյալ թվերը՝ հիսունչորս ամբողջ տաս-

ներկու հարյուրերորդական ոուբլի: ինն ամբողջ յերկու հարյուրերորդական մետր, զերո ամբողջ վեց հարյուրերորդական հեկտոլիտր, քսան ամբողջ յոթ հարյուրերորդական տոնն:

8,354 կմ-ը կարդում են այսպես՝ 8 ամբողջ 354 հազարերորդական կիլոմետր:

0,065 ս-ը կարդում են այսպես՝ 0 ամբողջ 65 հազարերորդական տոնն:

4,003 կգ-ը կարդում են այսպես՝ 4 ամբողջ 3 հազարերորդական կիլոգրամ:

Հզարերորդական մասերը գտնվում են ստորակետից դեպի աջ յերրորդ տեղում:

637. Կարդացեք հետևյալ թվերը՝ 0,704 մ; 2,065 կգ; 70,026 ս:

9,004 գ; 0,003 հլ; 12,183 լ; 0,029 կմ; 3,703 կգ; 0,354 ս:

638. Տասնորդական կոտորակների կարգային ցանցը

Ամբողջ թիվ	Սուրբակ	Միավորի մասերը		
		Տասերորդական	Հարյուրերորդական	Հազարերորդական
4	:	5	8	6
8	:	7	9	7
0	:	0	8	0
3	:	0	0	8

Կարդացեք կարգային ցանցի մեջ տեղավորված թվերը:

639. Քանի ամբողջ միավորներ, քանի առանձին տասերորդական մասեր, քանի առանձին հարյուրերորդական և առանձին հազարերորդական մասեր կան հետևյալ թվերի մեջ: 4,785; 0,856; 0,084; 2,08; 4,006; 0,805; 0,005:

640. Ընդամենը քանի հարյուրերորդական մասեր և լացի այլ, քանի հազարերորդական մասեր կան հետևյալ կոտորակների մեջ՝ 0,617; 0,254; 0,507; 0,086; 0,002:

641. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ ութ ամբողջ հարյուրտասներեք հազարերորդական մետր, զերո ամբողջ յոթ հազարերորդական կիլոմետր, յերեք ամբողջ տասներկու հազարերորդական տասնն, ութ ամբողջ հարյուր կինգ հազարերորդական ցեստաներ, զերո ամբողջ քսանինգ հազարերորդական հեկտոլիտր, հարյուր ամբողջ յերեք հարյուր քառասունութ հազարերորդական կիլոգրամ, զերո ամբողջ տասնութ հազարերորդական:

642. Մետրի վեր մասն ե կազմում 1 դմ-ը; 1 սմ-ը; 1 մմ-ը; 3 դմ-ը; 5 սմ-ը; 9 մմ-ը; 24 սմ, 138 մմ-ը; 45 մմ-ը:

643. Կիլոմետրի վեր մասն ե կազմում 1 մ-ը; 8 մ-ը; 32 մ-ը; 636 մ-ը:

644. Գրեցեք մետրներով՝ 3 մ 8 դմ-ը; 5 մ 21 սմ-ը; 12 մ 7 սմ-ը; 8 մ 325 մմ-ը; 24 մ 36 մմ-ը; 50 մ 5 մմ-ը; 236 մմ-ը; 75 մմ-ը; 8 մմ-ը:

645. Գրեցեք գեցիմետրներով՝ 3 դմ 8 սմ-ը; 5 դմ 38 մմ-ը; 14 դմ 5 մմ-ը; 5 սմ 8 մմ-ը:

646. Գրեցեք սանտիմետրներով՝ 2 սմ 8 մմ-ը; 3 մմ-ը; 8 մմ-ը:

647. Գրեցեք կիլոմետրներով՝ 2 կմ 568 մ; 356 մ-ը; 1 կմ 25 մ-ը; 8 մ-ը:

648. Կիլոգրամի վեր մասն ե կազմում 1 գ-ը; 3 գ-ը; 15 գ-ը; 257 կգ-ը:

649. Ցենտների վեր մասն ե կազմում 1 կգ-ը; 5 կգ-ը; 12 կգ-ը:

650. Ցոնի վո՞ր մասն ե կազմում 1 կգ-ը; 1 ց-ը; 782 կգ-ը; 56 կգ-ը; 8 ց-ը:

651. Գրեցեք կիլոգրամներով՝ 8 կգ; 276 գ-ը; 452 գ-ը; 12 կգ 43 գ-ը; 6 գ-ը:

652. Գրեցեք ցենտներներով՝ 2 ց 86 կգ-ը; 48 կգ-ը; 15 ց 6 կգ-ը; 7 կգ-ը:

653. Գրեցեք տոններով՝ 18 և 2 ց-ը; 3 և 152 կգ-ը; 8 և 84 կգ-ը; 64 կգ-ը:

654. Հեկտոլիտրի վո՞ր մասն ե կազմում՝ 1 դիլ-ը; 1 լ-ը; 5 դիլ-ը:

655. Ասացեք հետևյալ կոտորակների համարէչներն ու հայտարարները՝ 0,07; 0,405; 7,4; 0,002; 20,08:

656. Ստորակետից հետո վո՞ր տեղումն են գտնվում տասերորդական մասերը, հազարերորդական մասերը, հարյուրերորդական մասերը:

657. Մեկ հարյուրերորդականը մեկ տասերորդականից քանի անգամ ե փոքր: Մեկ հարյուրերորդականը մեկ հազարերորդականից քանի անգամ ե մեծ:

658. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ յոթ ամբողջ ութ հարյուրերորդական, ինն ամբողջ չորս տասերորդական, յերկու ամբողջ հարյուր քառասուն հինգ հազարերորդական, զերո ամբողջ յերեք հազարերորդական, վեց ամբողջ յերկու հարյուր հինգ հազարերորդական, զերո ամբողջ տասնյոթ հարյուրերորդական:

Ստորակետից հետո չորրորդ տեղում գտնվում են տասհազարերորդական մասերը՝ 7,8642-ը կարգացվում ե այսպիս՝ 7 ամբողջ 8642 տասհազարերորդական: 2,0068-ը կարգացվում ե այսպիս՝ յերկու ամբողջ 56 տասհազարերորդական:

Ստորակետից հետո հինգերորդ տեղում գտնվում են հարյուրհազարերորդական մասերը՝ 4,52067-ը կարգացվում ե այսպիս՝ 4 ամբողջ 52067 հարյուրհազարերորդական: 8,06024 թիվը կարգացվում ե այսպիս՝ 8 ամբողջ 6024 հարյուրհազարերորդական:

Ստորակետից հետո վեցերորդ տեղում գտնվում են միլիոններորդական մասերը, օ,865047 թիվը կարգացվում ե այսպիս՝ 5 ամբողջ 865047 միլիոններորդական: 0,000705-ը կարգացվում ե այսպիս՝ 0 ամբողջ 705 միլիոններորդական:

659. Կարգացեք կարգային ցանցում տեղակորպած թվերը՝

Ամբողջ թիվ				Մասեր							
Հազարներ	Դարչեր	Ամսներ	Տիպներ	Առաջնական	Դրանք առաջնական	Դրանք առաջնական	Դաշտային	Առաջնական	Դրանք առաջնական	Դաշտային	Առաջնական
4	3	2	1	1	2	3	4	5	6		
5	6	7	,	6	7						
8	0	,		3	0	7	5				
1	0			0	0	3					
	3	,		4	2	0	9	5			
	0	,		3	0	4	0	9			
									6		

660. Կմը մասերն են գոտնվում ստորակետից դեպի աջ յերարդ տեղում, հինգերորդ տեղում, յերկրորդ տեղում, չորրորդ տեղում, առաջին տեղում, վեցերորդ տեղում:

661. Ստորակետից հետո վմը տեղումն են գոտնվում մասերը ստորական մասերը, միլիոներորդական մասերը, հարյուրերորդական մասերը, հարյուրհազարերորդական մասերը, հազարհրորդական մասերը, տասնազարերորդական մասերը:

662. Գրեցեք հետևյալ թվերը՝ յերս ամբողջ յերեք հարյուր ութանասուն ինն տասնազարերորդական, յերեք ամբողջ քսան յոթ հազարերորդական, ութ ամբողջ յերեք հազար տասնութ միլիոներորդական:

663. Ինչպիսի մասերով են արտահայտված տասերորդական կոտորակը, յեթե ստորակետից հետո գոտնվում են 5 թվանշան, 4 թվանշան, 6 թվանշան:

664. Միավորի ինչպիսի մասեր կստանանք, յեթե հարյուրերդական մասը բաժանենք 10 մասի, 100 մասի, 1000 մասի:

665. Մի հարյուրերորդական մեջ քանի՞ հազարերորդական մասեր կան, տասնազարերորդական մասեր կան, միլիոներորդական մասեր կան:

666. Մեկ հազարերորդական մասը քանի՞ անգամ մեծ է մեկ հարյուրհազարերորդականից, մեկ միլիոներորդականից:

667. Մեկ հարյուհազարերորդական մասը քանի՞ անգամ

փոքր է 1 հարյուրերորդականից, 1 տասերորդականից, 1 տասը հազարերորդականից, 1 հազարերորդականից:

